

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**

**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐ**

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից:

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Ջեմմա Հարությունյանի կողմից:

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 24-Ն որոշմամբ

ԱՄԱՍԻԱ 2017

Հապավումների ցանկ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԿԱԻՆ	Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
ԳՄՀԸ	Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերություն
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ՀՖՄ ՀԿ	«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն

ԲԲՀ	Բազմաբնակավայր համայնք
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ-եր	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԶԾ	Մարզային զարգացման ծրագիր
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶԾ	Տարածքային զարգացման ծրագիր
ՀԶՀԾ	Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր
ՀԶՔԾ	Համայնքի զարգացման քառամյա ծրագիր
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԽՄ	Խորհրդակցական մարմին
ԲԱԽ	Բնակավայրային աշխատանքային խումբ
ՀԿՏՀ	Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգ
ՈՒԹՀՎ	Ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՔՀՄՀ	Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածներ
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՆՈԻՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
1. Համայնքի իրավիճակի բնութագրում, վերլուծություն և գնահատում.....	7
2. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶԲԾ-ի հիմնական նպատակների սահմանում.....	38
3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերի ու միջոցառումների ներկայացում.....	40
4. Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծում, գնահատում և կանխատեսում.....	42
5. Համայնքի ոլորտային ծրագրերի ցանկի կազմում և առաջնահերթությունների սահմանում, ֆինանսապես ապահովված ծրագրերի ձևակերպում և ամփոփում, լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման հնարավորությունների ներկայացում.....	51
6. Համայնքի սեփականություն համարվող գույքի (շենքերի, շինությունների, հողամասերի և այլն) կառավարման (օտարման, վարձակալության տրամադրման) հնգամյա ծրագիրը	73
7. ՀԶՀԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման ձևաչափերը.....	77
Եզրափակում.....	80
Հավելված 1. Համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը	81
Հավելված 2. Համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի, համայնքի բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը.....	82
Հավելված 3. Համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ առանձին բնակավայրերի	94
Հավելված 4. Համայնքում առկա անասնազլխաքանակի տվյալներն՝ ըստ առանձին	

բնակավայրերի.....	96
Հավելված 5. Համայնքի հիմնական ցուցանիշների գնահատումը և կանխատեսումը.....	97
Հավելված 6. ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերի նկարագրերը	100
Հավելված 7. ՀԶՀԾ-ի իրականացման տեղեկատվությունն՝ ըստ առանձին ոլորտների	187

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՔԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2014 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» (այսուհետ՝ Մեթոդաբանություն) և ԳՀՄԸ/ՀՖՄ ծրագրի շրջանակներում 2016 թվականին մշակված՝ «Բազմաբնակավայր համայնքում «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» կիրառման ուղեցույցը» (այսուհետ՝ Ուղեցույց):

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում առկա ենթակառուցվածքներ և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները.

- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է նաև ՀԶՀԾ-ի մշակմանը մասնակցած՝ համայնքի ԲԱԽ-երի կողմից կատարված աշխատանքով և առաջարկություններով, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ համայնքը ձևավորվել է համայնքների խոշորացման պետական փորձնական ծրագրի իրականացմամբ, գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում և, այս առումով, մեծացել է համայնքի զարգացմանը և առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավելու հնարավորությունները: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերը համաչափ զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ռիսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև Ամասիայի բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի՝ նախկին համայնքների նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, միտումները և դրանց շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2016-20թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶՀԾ-ի 1-ին բաժինը ներառում է՝ համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր, բնակավայրային և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀԶՀԾ-ի մշակման մեթոդաբանական չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հիմնական ենթակառուցվածքների առկայության և ընդհանուր վիճակի, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա, ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի, կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀԶՀԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶՀԾ-ի 2-րդ բաժինը ներառում է՝ համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀԶՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶՀԾ-ի 3-րդ բաժինը ներառում է՝ պետության, միջազգային և տեղական, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերն ու միջոցառումները:

ՀԶՀԾ-ի 4-րդ բաժինը ներառում է՝ համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական դրամաշնորհներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային տվյալները:

ՀԶՀԾ-ի 5-րդ բաժինը ներառում է՝ ԲԱԽ-երի կողմից, ըստ բնակավայրերի, առաջարկված առաջնահերթ ոլորտային ծրագրերի ցանկը, ապա՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀԶՀԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով դրանց կազմման՝ Մեթոդաբանությունում բերված օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

Բաժնույն ներկայացվում են նաև ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերն՝ ըստ առանձին բնակավայրերի և առաջիկա հինգ տարիների:

ՀԶՀԾ-ի 6-րդ բաժինը ներառում է՝ համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի օտարման հնգամյա ծրագիրն՝ ըստ առանձին տարիների:

ՀԶՀԾ-ի 7-րդ բաժինը ներառում է՝ ՀԶՀԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման ձևաչափերը:

ՀԶՀԾ-ի եզրափակումը ներառում է՝ համառոտ մոտեցումներ և դրույթներ՝ ՀԶՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

ՀԶՀԾ-ի հավելվածները ներառում են՝

- համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը,
- համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի, համայնքի բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը,
- համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ առանձին բնակավայրերի,
- համայնքում առկա անասնազխաքանակի տվյալներն՝ ըստ առանձին բնակավայրերի,
- համայնքի հիմնական ցուցանիշների գնահատումը և կանխատեսումը,
- համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերի ձևակերպումներն՝ ըստ դրանց օրինակելի ձևի,
- համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերն՝ ըստ առանձին բնակավայրերի:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի հունիսի 17-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն (ՀՕ 100-Ն)՝ Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Հովտուն, Մեղրաշատ, Ողջի և Ջրաձոր համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Ամասիա բազմաբնակավայր համայնքը:

Այսպիսով, ներկայումս Ամասիա համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Բյուրակն, Գտաշեն, Հովտուն, Մեղրաշատ, Ողջի և Զրաձոր գյուղերը (աղյուսակ 1):
Համայնքի կենտրոնը Ամասիա գյուղն է:

Աղյուսակ 1. Համայնքի բնակավայրերի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության, տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Համայնքն իր սահմաններով Աշոցք, Արփի, Հայկավան, Վահրամաբերդ և համայնքներին: Ստորև համառոտ համայնքի կազմում բնակավայրերի	Հ/հ	Բնակավայրի անվանումը	Վարչական տարածքը (հա)	Առկա բնակչության թվաքանակը (մարդ)	Մշտական բնակչության թվաքանակը (մարդ)	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը	վարչական սահմանակից է Սարապատ, Մարմաշեն, Կապս ներկայացվում է տեղեկատվություն ընդգրկված մասին:
	1.	Ամասիա	4966,2	2186	1973	667	763	
	2.	Արեգնադեմ	3143,4	457	515	93	103	
	3.	Բանդիվան	1076,84	265	286	72	72	
	4.	Բյուրակն	2402,56	689	838	172	237	
	5.	Գտաշեն	3640,89	272	483	84	85	
	6.	Հովտուն	1238,96	214	191	48	53	
	7.	Մեղրաշատ	1147,91	578	383	112	112	
	8.	Ողջի	1699,26	825	538	185	215	
	9.	Զրաձոր	1152,28	243	350	75	93	
ԳՅՈՒՂ ԱՄԱՍԻԱ		Ընդամենը	20468,3	5729	5557	1508	1733	

Նախկինում տարածաշրջանի շրջկենտրոն, մարզկենտրոնից գտնվում է 44 կմ հյուսիս-արևելք: Նախկինում ունեցել է Համասիտ, Ղուկասյան, Ներքին Ղուկասյան անվանումները:

Գյուղը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1870մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Ամասիայից 2կմ արևմուտք կա հին գյուղատեղի, որը տեղացիները անվանում են Խարաբալար: Ըստ բնակիչների պատմածի այդ գյուղի բնակիչները եղել են հույներ: Գյուղից հյուսիս-արևմուտք Չաթին դարափ կոչված բերդի ավերակներն են: Բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել են 1829 թ-ին Արևմտյան Հայաստանից՝ Բասենից և Կարսի մարզից: 1886 թ-ին գյուղն ունեցել է 274, 1914 թ-ին՝ 564, 1931 թ-ին՝ 645, 1959 թ-ին՝ 1527, 1970 թ-ին՝ 2773, 1980 թ-ին՝ 3175 հայ բնակիչ:

Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բնակավայրը 2016 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 1973 մարդ: Մեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 54 %, հետաշխատունակներ՝ 18%: Ունի 114 տնտեսություն: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մանկապարտեզ, հիվանդանոց, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր, խոտհարքներ:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Զբաղվում են հացահատիկային, կարտոֆիլի, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են նաև թռչնաբուծությամբ: Ունի պանրի գործարան, որտեղ արտադրվում են Լոռի, Չանախ պանիրներ և արտադրանքը սպառվում է ինչպես մարզի, այնպես էլ մարզի սահմաններից դուրս: 2011 թվականին բնակավայրում բացվել է Հայ - Գերմանական համատեղ կարի արտադրամաս, որը լուծեց կարևորագույն հարցերից մեկի՝ աշխատատեղերի հարցը: Կարի արտադրամասում աշխատանքով է ապահովվել շուրջ 70 մարդ, այն ավելանալու միտում ունի:

Գյուղում բացվել է նաև համայնքային կենտրոն, որը երիտասարդության համար ժամանցի լավագույն կենտրոններից մեկն է: Կենտրոնի հարևանությամբ բացվել է նաև մանկապարտեզ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, փողոցային լուսավորության ցանցի ընդլայնումը, բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգումը, կոյուղու համակարգի արդիականացումը, համայնքապետարանի շենքի վերանորոգումը և այլ խնդիրներ:



Ամասիայի համայնքային կենտրոն, նախակրթարան



Ամասիայի համայնքային գրադարան



Ամասիայի զբոսայգի



Ամասիայի հուշարձան խաչքար



Ամասիայի արվեստի դպրոց



Ամասիայի մարզափամերգային կենտրոն



Ամասիայի կարի գործարան

ԳՅՈՒՂ ԱՐԵԳՆԱԴԵՄ

Հեռավորությունը մարզկենտրոնից 24 կմ է, ՀՀ պետական սահմանից 11 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից 1890մ, բնակչիմայական պայմանները լեռնային, մշտական բնակչության թիվը 515 մարդ, 103 ընտանիք, բնակավայրի զբաղեցրած տարածքը կազմում է 3143,4 հա, որից համայնքի սեփականություն՝ 1143.4 հա, պետության սեփականություն՝ 1314.4 հա, իսկ 685.5 հա-ը հանդիսանում է իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն:

ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի նախկին տարածաշրջանի Արեգնադեմ գյուղը, որպես հայաբնակ գյուղ հիմնադրվել է 1988 թվականին Վրաստանի հանրապետությունից և Ադրբեջանից գաղթած, ինչպես նաև Գյումրիից և մոտակա համայնքներից ներգաղթած բնակիչներով: Նախկին անվանումը եղել է <Ազիզբեկով>, որն անվանվել է 26 կոմիսարներից մեկի պատվին: Մինչ 1988 թվականը գյուղը բնակեցված է եղել ազերիներով, չի եղել ոչ մի հայկական ընտանիք:

Արեգնադեմը որպես հայկական գյուղ կարելի է համարել երիտասարդ: Գյուղում բնակվողները զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ, սովետական տարիներին գյուղն ունեցել է կոլտնտեսություն:

Քանի որ հայաբնակ չի եղել, չունի պատմամշակութային կառույցներ: Ներկայումս բնակվում է 515 մարդ, 103 ընտանիք: Գյուղի բնակչության զբաղվածությունը այժմ էլ հիմնականում հողագործությունն ու անասնապահությունն է: 1991թ. գյուղում իրականացվել է հողերի սեփականաշնորհման ընդհանուր գործընթացը, 90 ընտանիքներ ունեն սեփականություն համարվող վարելահողեր և տնամերձ հողամասեր:

Շիրակի մարզի Արեգնադեմ գյուղը գտնվում է մարզի հյուսիս - արևմտյան մասում՝ սարի լանջին: Գյուղի հեռավորությունը Երևանից – 141կմ է, Գյումրի քաղաքից՝ 24կմ, Ամասիայից՝ 3 կմ է: Ռելիեֆը խայտաբղետ է, տեղումները շատ:

Հանրապետության ամենացուրտ և ամենաձյունառատ վայրերից մեկն է: Գյուղի մթնոլորտային տեղումների տարեկան միջին գումարը կազմում է 450-500մմ.: Ձյունածածկ օրերի թիվը կազմում է 150: Օդի ջերմաստիճանը տատանվում է - 40-ից + 30 աստիճանի: Խիստ կարճատև է գարունը և ամառը, սառնամանիք ժամանակաշրջանը ամենաերկարն է՝ 5 ամիս:

Մթնոլորտային ճնշումը տատանվում է 550-600մմ սնդիկի սյան սահմաններում: Արեգնադեմ գյուղի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 1890մ. բարձրության վրա: Մշակվող հողերը գտնվում են միջին և ուժեղ թեքությունների վրա, ինչպես նաև ալիքավոր հարթություններում:

Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գազաֆիկացումը, դպրոցի, մարզադահլիճի և մարզահրապարակի կառուցումը, վարչական շենքի վերանորոգումը, փողոցային լուսավորության ցանցի ընդլայնումը, համայնքային կենտրոնի կահավորումը և այլ խնդիրներ:

ԳՅՈՒՂ ԲԱՆՂԻՎԱՆ

Գյուղ Ամասիայի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 28կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Բանդեվան, Բանդիվան Փոքր, Պենտեվան, Բանդիվան Վերին անվանումները: Ներկայիս գյուղից մոտ 1-1.5 կմ արևմուտք գտնվում է Բանդիվան Ներքին լքված գյուղը, որը 1951-52 թթ միացվել է Վերին Բանդիվանին և այդ ժամանակնից կոչվել Բանդիվան:

Գյուղը գտնվում է Ախուրյան գետի ձախ ափին՝ ծովի մակարդակից 1940մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները:

Գյուղի շրջակայքում կան այրվող թերթաքարի պաշարներ, որոնք չունեն արդյունաբերական նշանակություն:

Գյուղի բնակչության նախնիները 1829թ գաղթել են Կարսի մարզից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 213, 1897 թ-ին՝ 806, 1970 թ-ին՝ 336, 1979 թ-ին՝ 315 բնակիչ: 2016թ-ի հունվարի 1-ի դրությամբ առկա բնակչության թիվը կազմում է 265 մարդ, 42 ընտանիք: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 47%, կանայք՝ 53%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 53%, հետաշխատունակներ՝ 18%: Ունի 54 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր՝ բնական կերահանդակներ: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաների, մասամբ կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են նաև անասնապահությամբ և մեղվաբուծությամբ:

Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գազաֆիկացումը, դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացման հետ կապված դժվարությունները:

ԳՅՈՒՂ ԲՅՈՒՐԱԿՆ

Գյուղ Ամասիայի տարածաշրջանում, Ամասիայից 12կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 16կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գյուլիբուլաղ Թուրքի, Գյուլիբուլաղ Կարափափախ անվանումները:

Գյուղը տեղադրված է Շիրակի դաշտի հյուսիս-արևմուտքում, Ախուրյան գետի աջակողմյան գետահովտում՝ ծովի մակարդակից 1730մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Ունի աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր:

1897 թ-ին գյուղն ունեցել է 958, 1926 թ-ին՝ 1142, 1939 թ-ին՝ 1388, 1959 թ-ին՝ 1529, 1970 թ-ին՝ 2459, 1979 թ-ին՝ 2580 բնակիչ, գերազանցապես հայեր: Բնակավայրը 2016թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 689 առկա բնակչություն, 172 ընտանիք: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 47%, կանայք՝ 53%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 169 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Զբաղվում են նաև հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ:

Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գազաֆիկացումը, խմելու և ոռոգման ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, արտաքին լուսավորության ցանցի անցկացումը, արոտների ջրարբիացումը:

ԳՅՈՒՂ ՊՏԱՇԵՆ

Գտաշեն գյուղը գտնվում է ՀՀ հյուսիս-արևմուտքում: Գյուղը սահմանամերձ է և լեռնային, գտնվում է ծովի մակարդակից 1860մ բարձրության վրա: Գյուղը նախկինում աղբբեջանաբնակ է եղել: 1988թ.-ից այն վերաբնակեցվել է հայերով: Գտաշեն գյուղը վերակազմավորվել է 1989թ.-ին: Նախկին համայնքն ունեցել է երկու բնակավայր՝ Գտաշեն և Կամխուտ: Կամխուտում կան II-V դարում կառուցված եկեղեցու փլատակներ: Գյուղն ունի 469 բնակիչ, վարչական տարածքը կազմում է 3640.89 հա:

Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, մասամբ կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են նաև անասնապահությամբ և մեղվաբուծությամբ:

Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գազաֆիկացումը, ոռոգման ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, մշակույթի տան վերանորոգումը, մանկապարտեզի շենքի վերանորոգումը:

ԳՅՈՒՂ ՀՈՎՏՈՒՆ

Գյուղ Ամասիայի տարածաշրջանում, Ամասիա գյուղից 3կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից գտնվում է 36կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ալաքիլիսա, Ալաքիլիսե, Բայթար անվանումները: Հովտում է վերանվանվել 1991 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Գյուղը տեղադրված է Ախուրյան գետի ձախափնյա հովտում, Եղնախաղի լեռնազանգվածի արևելյան ստորոտում՝ ծովի մակարդակից 2000մ բարձրության վրա: Կիման ցուրտ լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Ունի սառնորակ աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր:

Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:

Բնակչության նախնիների մի մասը եկել է Կարսի մարզից 1918-20թթ.: Որոշ աղբյուրներում Հովտունը հիշատակվում է որպես հնաբնակ գյուղ: 19-րդ դարի սկզբին այստեղ բնակվել են նաև ադրբեջանցիներ:

1831 թ-ին գյուղն ունեցել է 27 ադրբեջանցի բնակիչ, իսկ 1897թ.-ին՝ 220, 1926 թ-ին՝ 352, 1939 թ-ին՝ 477, 1959 թ-ին՝ 236, 1970 թ-ին՝ 207, 1979 թ-ին՝ 253 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բնակավայրը 2016 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 214 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 47%, կանայք՝ 53%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 27%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 21%: Ունի 41 տնտեսություն: Ունի դպրոց, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես բնական կերահանդակներ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են դաշտավարությամբ, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ:

Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գազաֆիկացումը, արոտների ջրարբիացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, համայնքային կենտրոնի կառուցումը, գյուղատնտեսական մթերքի իրացման ցածր գները և դժվարությունները:

ԳՅՈՒՂ ՄԵՂԱՇԱՏ

Բնակավայրի ներկայիս անվանումը –ՄԵՂԱՇԱՏ

Պատմական անվանումը- ՂԱՐԱՄԱՄԱՏ

Հիմնադրման ժամանակաշրջանը – 1812 թվական

Բնակավայրի վարչական տարածքը – 1147.91 հա

Հեռավորությունը մայրաքաղաքից-140 կմ

Հեռավորությունը մարզկենտրոնից -18 կմ

Ամասիա համայնքային կենտրոնից 16 կմ

Բնակչության թիվը – 578 մարդ

Բնակչության կազմը – հայեր

Կրթական հաստատություններ – միջնակարգ նորակառույց դպրոց

Մշակութային հաստատություններ –համայնքային կենտրոն

Արտադրական ձեռնարկություններ – քարի մշակման արտադրամաս

Բնակչության հիմնական զբաղմունքը – հողագործություն, անասնապահություն , մեղվաբուծություն

Հոգևոր կառույցներ – վթարային եկեղեցի, կառուցված՝ 1901թվականին:

Մեղրաշատ գյուղը նախկինում ունեցել է Գարամահմատ, Գարամահմեդ, Կարամահմեդ, Կարամամեդ, Ղարամահմադ, Ղարամամեդ անվանումները:

Մեղրաշատ է վերանվանվել 1946 թ-ին: Հիմնադրվել է 1812 թվականին: Գյուղում բնակվել են հույներ, այդ են վկայում հին գերեզմանատան հունական գերեզմանոցները: Համայնքում առկա է եկեղեցի, որի շինարարական աշխատանքները սկսվել է 1901թ-ին, ավարտվել է 1906թ-ին: 1906թ-ից մինչև 1922թ եկեղեցին աշխատել է բնականոն կյանքով հոգևոր աշխատանքները կատարել է՝ Ոսկան-Տեր-Պետրոսյան քահանան: ԽՍՀՄ կարգերից հետո եկեղեցին ծառայել է որպես կոլտնտեսության պահեստ: Մինչև օրս եկեղեցին կանգուն է, 1988թ-ի երկրաշարժից փասսվել է, և ունի վերանորոգման կարիք: Գյուղը տեղադրված է Ախուրիկ գետի վերին հոսանքում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1750մ բարձրության վրա: Մեղրաշատ գյուղը հարավ-արևմուտքից սահմանակից է Թուրքիային և ընդգրկված է Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի ցանկում:

Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինումեն ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Միջին ջերմաստիճանը - 20C +30C: Համայնքի բնակչության հիմնական արմատները գալիս են Արևմտյան Հայաստանի Ղարսի և Բասենի նահանգներից: 1960թ-ից համայնքում բնակվելու են եկել լքված Մումուխան գյուղի բնակիչները: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և բազմամյա խոտաբույսերի մշակությամբ, մեղվապահությամբ Գյուղի շրջակայքում պահպանվել են 1868 թվականին կառուցված փայտաշեն եկեղեցի, Իսկ դեպի հյուսիս-արևելք գտնվում է Մամուծան գյուղատեղին:

1887 թվականից Մեղրաշատը գտնվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921 թվականին բնակավայրում հաստատվել են խորհրդային կարգեր և մինչև 1996 թվականը ընդգրկված է եղել Ամասիայի շրջանի կազմում: 1996 թվականին Հայաստանի Հանրապետության վարչատարածքային վերջին բաժանումից հետո Ձորակապը, որպես վարչական առանձին միավոր՝ ինքնուրույն համայնք, ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի կազմում:

Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում են ոռոգման սանցի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գերեզմանատան պարսպապատումը և այլ խնդիրներ:

ԳՅՈՒՂ ՈՂՋԻ

Գյուղ Ամասիայի տարածաշրջանում, Ամասիայից 18 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 15կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ոխչի, Օխչի, Օղջողի, Օղջ, Օճագլը՝ Անդրանիկավան անվանումները: Ողջի է վերանվանվել 1991 թվականին:

Գյուղը տեղադրված է Ախուրիկ գետի հովտում, սարահարթում՝ ծովի մակարդակից 1630մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաքթերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Ունի արտեզյան ջրհորներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Գյուղի շրջակայքում կան պեմզայի և ավազի հանքեր, որոնք շահագործվում են:

1886 թ-ին գյուղն ունեցել է 551, 1897 թ-ին՝ 747, 1926 թ-ին՝ 799, 1939 թ-ին՝ 1093, 1959 թ-ին՝ 1032, 1979 թ-ին՝ 1504 բնակիչ: 1988-1989թթ հայ-ադրբեջանական հարաբերությունների վատթարացման արդյունքում գյուղի ադրբեջանցիները տեղափոխվել են Ադրբեջանի հանրապետություն: 1989-1990թթ գյուղում վերաբնակեցվել են Ադրբեջանից, Վրաստանի Նինոծմինդայի և Սպիտակի երկրաշարժի աղետի գոտուց տեղափոխված 1669 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բնակավայրը 2016 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 825 մարդ: Մեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 28%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 20%: Ունի 87 տնտեսություն: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ, պտուղներ: Զբաղվում են նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում են խմելու և ոռոգման ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, արտաքին լուսավորության ցանցի անցկացումը:

ԶՐԱՁՈՐ

Բնակավայրի ներկայիս անվանումը –Զրաձոր

Բնակավայրի պատմական անվանումները - Թափնկի, Ճելապկեչուտ, Ճելլաբ, Չալաբ, Զալաբ (գեչիդ), Զալաբ (կեչուտ), Զելաբ (կեչուտ), Տալինկի

Բնակավայրի հիմնադրման ժամանակաշրջանը –1828

Որ հբնակավայրերին է սահմանակից գյուղը –Հոդմիկ, Արեգնադեմ,Բանդիվան

Բնակավայրի վարչական տարածքը –1152,28 հա

Հեռավորությունը մայրաքաղաքից-150կմ

Հեռավորությունը մարզկենտրոնից– 18կմ
Առկա բնակչության թիվը – 243,
Կրթական հաստատություններ– <<Ջրաձորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ
Մշակութային հաստատություններ- չկան
Մարզական հաստատություններ -չկան
Արտադրական ձեռնարկություններ - չկան
Բնակչության հիմնական զբաղմունքը – անասնապահություն, հողագործություն
Հոգևոր կառույցներ – Սբ. Գևորգ եկեղեցի:

Ջրաձոր, Թափնկի, Ճելապկեչուտ, Ճելլաբ, Չալաբ, Ջալաբ (գեչիդ), Ջալաբ (կեչուտ), Ջելաբ (կեչուտ), Տալինկի - Գյուղ ՀՀ Ամասիայի նախկին շրջանում, Ամասիա գյուղից 5-6 կմ հարավ, Ախուրյանի ձախակողմյան Իլիգետի աջ ափին: Ջրաձոր է վերանվանվել 1946 թվականին:

Կլիման ցուրտ է, տեղումները՝ բավարար: Առանձնատները նորաշեն են, հարմարավետ: Խմելու ջուրը՝ Գյումրի գնացող գլխավոր ջրմուղից: 1831 թ ունեցել է 206, 1897-ին՝ 646, 1926-ին՝ 490, 1939– ին՝ 663, 1959-ին՝ 378, 1970-ին՝ 343, 1979-ին՝ 314, 1989-ին՝ 298 հայ բնակիչ, որոնց մի մասի նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասեն գավառի գյուղերից 19-րդ դարի սկզբին: Զբաղվում են անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ: Ունի ութամյա դպրոց, ակումբ, գրադարան, փոստակայան, բուժկայան: Գյուղում կան անշուք եկեղեցի, կիկլոպյան ամրոց (2–1-ին հազարամյակ, մթա), գերեզմանոց: Գյուղի դպրոցի մոտ բացվել են մթա 3-րդ հազարամյակի բնակավայրի հետքեր, գտնվել են մեծ քանակության շքեղ խեցեղենի բեկորներ, անոթներ, օջախի դեկորատիվ հարդարանքի մնացորդներ: Նույն տարածքում անտիկ ժամանակաշրջանում դամբարանադաշտ է եղել, որը միջնադարում ավերածությունների է ենթարկվել: 1967 թ գյուղի մոտ հայտնաբերվել է դիատոմիտի խոշոր հանքավայր: 1988 թ դեկտեմբերի երկրաշարժի հետևանքով գյուղում կան ավերածություններ, որոնք դեռևս վերականգնված չեն: 04.12.1995 թ մտել է ՀՀ Շիրակի մարզի մեջ:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են:

Ջրաձորում պահպանվել է Սբ. Գևորգ եկեղեցին:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 5729 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 2760 և կանայք՝ 2969: Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է **աղյուսակ 2-ում**:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

N	Ցուցանիշները	Ընդամենը համայնք	Գ.Ամասիա	Գ.Արեգն աղեն	Գ.Բանդիվ ան	Գ.Բյուրակ ն	Գ.Գտաշեն	Գ.Հովտուն	Գ.Մեղրա շատ	Գ.Ողջի	Գ.Ջրածոր
1	2	3	4	5	6	7	8	9	10		11
1.	Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	5729	2186	457	265	689	272	214	578	528	243
	Տղամարդիկ	2760	1041	212	122	365	141	96	262	396	125
	Կանայք	2969	1145	245	143	324	131	118	316	429	118
	0-6 տարեկան , այդ թվում՝	509	185	53	34	83	27	23	34	51	19
	0-3 տարեկան	228	91	28	9	33	9	13	11	26	8
	3-6 տարեկան	281	94	25	5	50	8	10	23	25	11
	7-17 տարեկան	596	203	54	49	74	53	30	41	55	37
	18-63 տարեկան	4051	1588	310	170	473	152	134	405	646	173
	63-ից բարձր տարեկան	548	198	40	15	59	43	27	77	73	16
2.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	619	237	66	15	65	61	17	69	73	16
	Տարիքային և աշխատանքային	619	237	66	15	65	61	17	69	73	16
3.	Փախստականներ										
4.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	26	6	1	2	2	6	1	4	2	2
5.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0	0	0	0	0	0	0	0	0	0
6.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ										
7.	Արցախյան										

	պատերազմի մասնակիցներ										
8.	Հաշմանդամներ, այդ թվում՝	134	39	18	10	18	15	4	4	11	15
	Մանկուց հաշմանդամներ	11	1	4	0	2	1	0	1	1	1
9.	Աշխատունակներ	4051	1588	310	170	473	152	134	405	646	173
10.	Զբաղվածներ	3201	1264	276	143	358	128	99	282	493	158
11.	Գործազուրկներ, այդ թվում՝	850	324	34	27	115	24	35	123	153	15
	Գրանցված										
12.	Առկա տնային տնտեսությունների թիվը	1508	667	93	72	172	84	48	112	185	75
13.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը, այդ թվում՝										
	Նպաստառու ընտանիքների թիվը	127	45	8	10	21	8	3	11	14	7
14.	Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը										
15.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը, այդ թվում՝										
	Անօթևան ընտանիքներ										

16.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը										
17.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	370	85	50	7	100	36	10	30	16	36
18.	Արտագնա/սեզոնային/ աշխատանքի մեկնողների թիվը	449	93	70	7	122	50	11	35	18	43

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2016թվականի հոկտեմբերի 2-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների արդյունքում ընտրվել է համայնքի ավագանի՝ բաղկացած 11 անդամից և համայնքի ղեկավար, որոնք օրենքով սահմանված կարգով ձևավորել են համայնքի աշխատակազմ՝ բաղկացած 42 աշխատակիցներից: Համայնքի ավագանին 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 14-Ա և թիվ 15-Ա որոշումներով հաստատել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը	Հավելում (բարձր լեռնային)	Ընդամենը ամսական աշխատավարձ	Ընդամենը տարեկան աշխատավարձ
-----	-------------------	-------------------	--------------------	---	---------------------------	-----------------------------	-----------------------------

				(դրամ)	(դրամ)	(դրամ)	(դրամ)
I. ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ							
1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	200000	0	200000	2400000
2	Վարչական ներկայացուցիչ (Գտաշեն, Մեղրաշատ, Արեգնադեմ, Ողջի, Բանդիվան, Ջրածոր, Բյուրակն)	7	1	170000	0	1190000	14280000
3	Վարչական ներկայացուցիչ (Հովտուն)	1	1	162000	8000	170000	2040000
3	Համայնքի ղեկավարի օգնական	1	1	170000	0	170000	2040000
4	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	1	170000	0	170000	2040000
Ընդամենը		11	-	872000	8000	1900000	22800000
II. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ							
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ							
1	Աշխատակազմի քարտուղար	1	1	204000	0	204000	2448000
2	Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ամասիայի տարածքային բաժնի պետ	1	1	256600	0	256600	3079200
3	Գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	1	190000	0	190000	2280000
4	առաջատար մասնագետ	3	1	125000	0	375000	4500000
5	1-ին կարգի մասնագետ	2	1	114000	0	228000	2736000

6	2-րդ կարգի մասնագետ (Ամասիա, Գտաշեն, Մեղրաշատ, Արեգնադեմ, Ողջի, Բանդիվան, Զրաձոր, Բյուրակն)	8	1	85000	0	680000	8160000
7	2-րդ կարգի մասնագետ (Հովտուն)	1	1	85000	8000	93000	1116000
Ընդամենը		17	-	1059600	8000	2026600	24319200
III. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ							
1	Համայնքային կենտրոնի պատասխանատու	1	1	82000	0	82000	984000
2	Պահակ (համայնքապետարանի վարչական շենքի)	2	1	82000	0	164000	1968000
3	Հավաքարար (համայնքապետարանի վարչական շենքի)	2	1	82000	0	164000	1968000
4	Հարկային գործակալ	1	1	102000	0	102000	1224000
5	Վարորդ	1	1	96000	0	96000	1152000
6	Աղբատար մեքենայի վարորդ	1	1	82000	0	82000	984000
7	Մաքրող բանվոր (հավաքարար)	2	1	82000	0	164000	1968000
8	Բարձող բանվոր	4	1	82000	0	328000	3936000
Ընդամենը		14	3	690000	0	1182000	14184000
ԱՄԲՈՂՋԸ		42	-	2621600	16000	5108600	61303200

Համայնքի ավագանին 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 16-Ա որոշմամբ հաստատել է 3 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՑՔԱՉԱՓԵՐԸ
2017 ԹՎԱԿԱՆ**

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային)	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ)	Ընդամենը ամսական աշխատավարձ (հազ. դրամ)	Ընդամենը տարեկան աշխատավարձ (հազ. դրամ)
1	Տնօրեն	1	1	84700	84700	1016400
2	Հաշվապահ	1	1	78700	78700	944400
3	Գրադարանավար	1	1	77904	77904	934848
4	Գրադարանավար	1	1	77904	77904	934848
5	Գրադարանավար	1	1	72752	72752	873024
6	Գրադարանավար	1	1	72752	72752	873024
7	Հավաքարար	1	1	72752	72752	873024
Ընդամենը		7	7	537464	537464	6449568

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ <<ՆԱՆԵ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՑՔԱՉԱՓԵՐԸ
2017 ԹՎԱԿԱՆ**

Հ/հ	Պաշտոնի անվանումը (համայնքային ծառայության պաշտոնների մատվ՝ նաև ծածկագիրը)	Հաստիքներ ի քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ)	Ընդամենը ամսական աշխատավարձ (հազ. դրամ)	Ընդամենը տարեկան աշխատավարձ (հազ. դրամ)
1	Տնօրեն	1	1	95000	95000	1140000
2	Հաշվապահ	1	1	78700	78700	944400
3	Դաստիարակ	1	1	77904	77904	934848
4	Դաստիարակ	1	1	77904	77904	934848
5	Դաստիարակի օգնական	1	0,7	77904	54533	654393,6
6	Դաստիարակի օգնական	1	0,7	77904	54533	654393,6
7	Խոհարար	1	0,8	72752	58202	698419,2
8	Տնտեսվար	1	0,75	77904	58428	701136
9	Պահակ	1	1	77904	77904	934848
10	Պահակ	1	1	72752	72752	873024
11	Լվացարար	1	0,7	77904	54533	654393,6
12	Դաշնակահար	1	0,5	72752	36376	436512

13	Բուժքույր	1	0,5	72752	36376	436512
Ընդամենը		13	10,65	1010036	833144	9997728

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ <<ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
2017 ԹՎԱԿԱՆ**

Հ/հ	Պաշտոնի անվանումը (	Հաստիքների քանակը	Հաստիքային միավորը	Հաստիքային մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը (հազ. դրամ)	Ընդամենը ամսական աշխատավարձ (հազ. դրամ)	Ընդամենը տարեկան աշխատա վարձ (հազ. դրամ)
1	Տնօրեն	1	1	80000	80000	960000
2	Հաշվապահ	1	1	78700	78700	944400
3	Մարզիչ	1	1	78000	78000	936000
4	Մարզիչ	1	1	78000	78000	936000
5	Մարզիչ	1	0,5	78000	39000	468000

6	Մարզիչ	1	0,5	78000	39000	468000
7	Հավաքարար	1	0,5	72752	36376	436512
Ընդամենը		7	6,2	543452	496775,2	5961302,4

Համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը բերված է **հավելված 1-ում**:

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն են հանդիսանում նրա կազմի մեջ մտնող նախկին համայնքների սեփականություն համարվող գույքը, որի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով **Ներդիր 1-ում** բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ

- ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
- բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
- գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
- դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.
- ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

Հավելված 2-ում բերված է 01.06.2016թ. դրությամբ համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի: Ի լրումն սրան, բերված է նաև համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը:

1.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի վարչական տարածքում գործող պետական կազմակերպություններն են՝ Ամասիայի, Արեգնադեմի, Բանդիվանի, Բյուրակնի, Գտաշենի, Մեղրաշատի, Ողջիի, Ջրաձորի հիմնական դպրոցների և Հովտունիի տարրական դպրոցի ՊՈԱԿ-ները, որտեղ դասավանդում են 129 մականվարժներ, որից 122-ը ունեն բարձրագույն կրթություն, «Ամասիայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ն, որն սպասարկում է նաև Արեգնադեմի, Բանդիվանի, Բյուրակնի, Գտաշենի, Մեղրաշատի, Ողջիի, Ջրաձորի բուժական կաբարձական կետը (ԲՄԿ): Այդ կազմակերպությունների հետ նախկին համայնքների ՏԻՄ-երն արդյունավետորեն համագործակցել են, արվել է հնարավորը կրթության և առողջապահության ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

Ամասիա համայնքում գործում են նաև ոստիկանության, աշխատանքի և զբաղվածության, սոցիալական ապահովության, սոցիալական ծառայությունների, կադաստրի պետական կոմիտեի տարածքային պետական ստորաբաժանումները, որոնք սպասարկում են խոշորացված Ամասիայի համայնքի կազմի մեջ մտած բոլոր բնակավայրերին:

Համայնքում գործող միակ հասարակական կազմակերպությունը՝ <<Ամասիայի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն>> ՀԿ-ն է, որը տնական ժամանակ է ինչ համագործակցում է <<Կարիտաս>> ԲՀԿ-ի հետ: Համայնքում գործում է նաև <<Ամասիա>> բարգործական հիմնադրամը, որը սոցիալական ուղղվածության ծրագրեր է իրականացնում համայնքում:

Քաղաքական 3 կուսակցություններ /ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ/ Ամասիայում ունեն գրասենյակներ, ՀՀԿ-ի գրացենյակներ կան Բյուրակն և Գտաշեն գյուղերում:

Համայնքի Արեգնադեմ, Գտաշեն, Ամասիա և Մեղրաշեն բնակավայրերում գործում են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվները, որոնք մատուցում են գյուղատնտեսական աշխատանքների ծառայություններ, հատկապես՝ խոտհնձի և արոտների արդյունավետ օգտագործման բնագավառներում:

Բացի Ամասիա և Բանդիվան բնակավայրերից, մնացած 7 բնակավայրերում չկան գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպություններ:

Ամասիայում կան ոչ համայնքային ենթակայության հետևյալ կազմակերպությունները՝

- «Ամասիայի կաթի գործարան» ՍՊԸ, աշխատողների թիվը՝ 10,
- «Հայ-Գերմանական համատեղ կարի արտադրամաս, աշխատողների թիվը՝ 70,
- Թվով 3 ՓՀԷԿ –եր, որոնք տեղակայված են Ախուրյան գետի վրա, բնակավայրից 2 կմ հեռավորությամբ, աշխատողների թիվը՝ 12,
- Բնակավայրում գործում են հացի արտադրության 4 արտադրամասեր, առևտրի և հանրային սննդի 10 օբյեկտներ, որոնցում զբաղվածների թիվը կազմում է 81 մարդ:

- Բնակավայրում գործում է բանկի մասնաճյուղ, որտեղ աշխատում է 8 մարդ:
- **Բանդիվան գյուղում** գործում է <<Բանդիվան կաթ>> ՍՊԸ-ն, որն արտադրում է <<Չանաղ>>, <<Լոռի>> պանիրներ, թթվասեր և այլ կաթնամթերքներ, արտադրությունում զբաղված են 27 մարդ:

Մանրածախ առևտրի 2-ական օբյեկտներ կան **Բյուրակնում** և **Ողջիում** և 1-ական օբյեկտներ՝ Արեգնադեմում, Բանդիվանում և Գտաշենում: Մյուս բնակավայրերում արտադրական կամ առևտրի ու ծառայությունների օբյեկտներ չկան:

1.6 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր /գլխավոր հատակագիծ, գոտիավորման նախագիծ, հողերի օգտագործման սխեմա, քաղաքաշինական կանոնադրություն և այլն/ ունեցող բնակավայրեր չկան: Բացի Ամասիայից, մնացած բնակավայրերը չունեն ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի): Կանոնավոր կերպով աղբահանություն է իրականացվում միայն Ամասիայում, մնացած բնակավայրերում աղբահանության չի կազմակերպվում կամ առանձին դեպքերում այն իրականացվում է սանիտարական մաքրման օրեր կազմակերպելու միջոցով: Աղբամանների և աղբահավաք մեքենայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում գյուղերի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

Ամասիա գյուղը մոտավորապես 60%-ն ապահովված է փողոցային լուսավորությամբ, մնացած գյուղերում փողոցային լուսավորություն կա միայն կենտրոնական հատվածում կամ ընդհանրապես բացակայում է:

Գրեթե բոլոր բնակավայրերի գերեզմանատները ցանկապատերի վերանորոգման կամ մասնակի նորոգման կարիք ունեն:

Ստորև բերված է այս բնագավառում առկա իրավիճակի վերլուծությունը՝ ըստ առանձին բնակավայրերի՝

ԳՅՈՒՂ ԱՄԱՍԻԱ

Բնակավայրը չունի գլխավոր հատակագիծ: Գյուղի կառուցապատ տարածքը կազմում է 188.95 հա, որի կենտրոնական մասի կառուցապատումն իրականացված է նախկին գլխավոր հատակագծի համաձայն: Ծայրամասերի առանձին անհատական բնակելի տների և օժանդակ շինությունների կառուցապատումն իրականացված է տարերայնորեն:

Հասարակական կառուցապատումը կենտրոնացած է մշակույթի տան և նախկին շրջկենտրոնի վարչական շենքերի բազմաբնակարան բնակելի կառույցներով ձևավորված տարածքի շուրջ:

Քաղաքի գոյություն ունեցող հատակագծային կառուցվածքը պայմանավորված է ռելիեֆային բարդ պայմաններով (մեծ թեքություններ, կտրտվածություն): Կառուցապատված են հիմնականում հարթ տարածքները և քիչ թեք լանջերը: Փողոցային ցանցը կազմակերպված է մեկ հիմնական փողոց-առանցքից ճյուղավորվող կանոնավոր, միմյանց զուգահեռ մոտեցումներով:

Բնակավայրում առկա է բազմաբնակարան 11 շենքեր՝ 240 բնակարանով, որից 56-ը 1 սենյականոց բնակարաններ են, 104-ը՝ 2, 68-ը՝ 3 և 12-ը 4 սենյականոց: Ընդհանուր մակերեսը կազմում է 63271 քառ. մետր: Բազմաբնակարան շենքերից 7-ը ունեն 3-րդ կամ 4-րդ կարգի վնասվածություն, որտեղ ապրում են 611 մարդ, վերանորոգման կարիք ունեն տանիքները և շքամուտքերը: Համայնքում առկա է 272 անհատական առանձնատներ՝ 26783 քառ. մետր ընդհանուր մակերեսով:

Բնակավայրի բազմաբնակարան բնակելի շենքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված **1.1. հավելվածում:**

Համայնք մայրուղի ճանապարհի երկարությունը 2 կմ է, որը վերանորոգման կարիք ունի: Ասֆալտապատ է միայն բնակավայրի կենտրոնական փողոցը: Մնացած փողոցները հիմնականում ծածկույթ չունեն, հողից են կամ մանրաքարից:

Բնակավայրի ջրամատակարարումը կատարվում է ջրամատակարարման սեփական համակարգի միջոցով՝ օրական 12 ժամ տևողությամբ: Հայասա թաղամասը չունի ջրամատակարարման ներքին ցանց, իսկ ջրատար խողովակների առանձին հատվածներ և կարգավորիչ փականներ կարիք ունեն վերանորոգման: Բնակավայրը կոյուղացված է, որին միացված է տնային տնտեսությունների միայն 60 տոկոսը: Կոյուղու համակարգը նույնպես վերանորոգման և ընդլայնման կարիք ունի: Բնակավայրը չունի կոդտաջրերի մաքրման կայան:

Բնակավայրը գազաֆիկացված է: Բնակչությունը, մանկապարտեզը, դպրոցը և հասարակական նշանակության այլ կազմակերպություններ օգտվում են կապույտ վառելիքից: Բնակավայրում կենտրոնացված գազամատակարարում ունեցող տնային տնտեսությունների թիվը կազմում է 418՝ տեսակարար կշիռը՝ 62.7 տոկոս:

Բնակավայրն ունի աղբատար մեքենա և անհրաժեշտ քանակի աղբամաններ: Աղբահանությունը իրականացվում է շաբաթական 2 անգամ: Աղբավայրը, որը շահագործվել է դեռևս խորհրդային տարիներից, այժմ այն գտնվում է անմխիթար վիճակում և ենթակա է փակման, այն իր բացասական ազդեցությունն է թողնում բնակավայրի մաքրության և շրջակա միջավայրի վրա:

Բնակավայրում անցկացված է փողոցային լուսավորություն, որը ընդլայնման և խտացման կարիք ունի:

Բնակավայրի գերեզմանատունը ցանկապատված չէ, որի պատճառով անասուններն անարգել մուտք են գործում գերեզմանատան տարածք՝ առաջացնելով բնակչության արդարացի դժգոհությունը:

ԳՅՈՒՂ ԱՐԵԳՆԱԴԵՄ

Գյուղի կառուցապատ տարածքը կազմում է 87.83 հա, որում առկա են տիպային նախագծով կառուցված թվով 119 բնակելի տներ՝ 13073 քառ. մետր տնդհանուր մակերեսով, հասարակական և արտադրական նշանակության տարբեր շենքեր և շինություններ:

Բնակավայրը չունի գլխավոր հատակագիծ:

Համայնք մայրուղի ճանապարհի երկարությունը կազմում է 2 կմ է, որը վերանորոգման կարիք ունի: Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 4.3 կմ, որոնք ծածկույթ չունեն, հողից են կամ մանրաքարից:

Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է կենտրոնացված համակարգից և սպասարկվում է <<Հայջրմուղկոյուղի>> ընկերության կողմից: Բնակավայրը ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Վերանորոգման և ընդլայնման կարիք ունի ցանի առանձին հատվածներ:

Բնակավայրը կոյուղացված չէ, կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակերում առկա խորքային հորերի միջոցով:

Գյուղը գազաֆիկացված չէ:

Բնակավայրում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում:

Բակերի սանիտարական մաքրությունն ապահովվում է տնային տնտեսությունների կողմից, իսկ հասարակական նշանակության տարածքների մաքրությունը՝ սանիտարական օրեր կազմակերպելու միջոցով: Բնակավայրը չունի նաև աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի մաքրության վրա:

Բնակավայրում անցկացված է փողոցային լուսավորություն, որը ընդլայնման կարիք ունի:

Վերանորոգման կարիք ունի գերեզմանատան ցանկապատը:

ԳՅՈՒՂ ԲԱՆԴԻՎԱՆ

Բնակավայրը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղի կառուցապատ տարածքը կազմում է 66.24 հա, որում առկա են տիպային նախագծով կառուցված թվով 61 բնակելի տներ՝ 6100 քառ. մետր տնդհանուր մակերեսով, օժանդակ, հասարակական և արտադրական նշանակության տարբեր շենքեր և շինություններ:

Համայնք մայրուղի ճանապարհի երկարությունը կազմում է 1 կմ է, որը վերանորոգման կարիք ունի: Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 2.8 կմ, որոնք ծածկույթ չունեն, հողից են կամ մանրաքարից:

Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է սեփական համակարգի միջոցով՝ օրական 12 ժամ ջրամատակարարմամբ: Վերանորոգման և ընդլայնման կարիք ունի ներքին ցանը:

Բնակավայրը կոյուղացված չէ, կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակերում առկա խորքային հորերի միջոցով:

Գյուղը գազաֆիկացված է, 72 տնային տնտեսություններից 61-ը ունեն գազամատակարարում:

Բնակավայրում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում:

Բակերի սանիտարական մաքրությունն ապահովվում է տնային տնտեսությունների կողմից, իսկ հասարակական նշանակության տարածքների մաքրությունը՝ սանիտարական օրեր կազմակերպելու միջոցով: Բնակավայրը չունի նաև կառուցապատ աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի մաքրության վրա:

Բնակավայրում փողոցային լուսավորություն չի անցկացված:

Ցանկապատման կարիք ունի եկեցու և արարողությունների սրահի տարածքը:

ԳՅՈՒՂ ԲՅՈՒՐԱԿՆ

Բյուրակներ չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղի կառուցապատ տարածքը կազմում է 168.25 հա, որում առկա են ինչպես տիպային, այնպես էլ անհատական նախագծով կառուցված թվով 169 բնակելի տներ՝ 18638 քառ. մետր տնդհանուր մակերեսով, օժանդակ, հասարակական և արտադրական նշանակության տարբեր շենքեր և շինություններ:

Համայնք մայրուղի ճանապարհը և ներհամայնքային ճանապարհները ասֆալտի ծածկույթ չունեն, հողից են կամ մանրաքարից:

Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է կենտրոնացված համակարգից և սպասարկվում է <<Հայջրմուղկոյուղի>> ընկերության կողմից: Բնակավայրը ապահովված է օրական 18 ժամ ջրամատակարարմամբ: Վերանորոգման և ընդլայնման կարիք ունի ցանի առանձին հատվածներ:

Բնակավայրը կոյուղացված չէ, կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակերում առկա խորքային հորերի միջոցով:

Գյուղը գազաֆիկացված չէ:

Բնակավայրում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում:

Բակերի սանիտարական մաքրությունն ապահովվում է տնային տնտեսությունների կողմից, իսկ հասարակական նշանակության տարածքների մաքրությունը՝ սանիտարական օրեր և աղբահանություն կազմակերպելու միջոցով: Բնակավայրը չունի նաև կառուցապատ աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի մաքրության վրա:

Բնակավայրում փողոցային լուսավորություն չի անցկացված:

ԳՅՈՒՂ ԳՏԱՇԵՆ

Գտաշենը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղի կառուցապատ տարածքը կազմում է 117.34 հա, որում առկա են թվով 48 տիպային և 47 անհատական նախագծով կառուցված բնակելի տներ՝ 7130 քառ. մետր տնդհանուր մակերեսով, ինչպես նաև օժանդակ, հասարակական և արտադրական նշանակության տարբեր շենքեր և շինություններ:

Համայնք մայրուղի ճանապարհը և ներհամայնքային ճանապարհները ասֆալտի ծածկույթ չունեն, հողից են կամ մանրաքարից:

Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է կենտրոնացված համակարգից և սպասարկվում է <<Հայջրմուկոյուղի>> ընկերության կողմից: Բնակավայրը ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ: Վերանորոգման և ընդլայնման կարիք ունի ցանի առանձին հատվածներ:

Բնակավայրը կոյուղացված չէ, կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակերում առկա խորքային հորերի միջոցով:

Գյուղը գազաֆիկացված չէ:

Բնակավայրում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում:

Բակերի սանիտարական մաքրությունն ապահովվում է տնային տնտեսությունների կողմից, իսկ հասարակական նշանակության տարածքների մաքրությունը՝ սանիտարական օրեր և աղբահանություն կազմակերպելու միջոցով: Բնակավայրը չունի նաև կառուցապատ աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի մաքրության վրա:

Բնակավայրում փողոցային լուսավորություն չի անցկացված:

Գերեզմանատունը ցանկապատված է:

ԳՅՈՒՂ ՀՈՎՏՈՒՆ

Բնակավայրը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղի կառուցապատ տարածքը կազմում է 28.39 հա, որում առկա են թվով 45 տիպային նախագծով կառուցված բնակելի տներ՝ 4850 քառ. մետր տնդհանուր մակերեսով, ինչպես նաև օժանդակ և արտադրական նշանակության տարբեր շենքեր և շինություններ:

Բնակավայրը չունի հասարակական նշանակության շենքեր և շինություններ:

Համայնք մայրուղի ճանապարհը և ներհամայնքային ճանապարհները ասֆալտի ծածկույթ չունեն, քայքայված են, հողից են կամ մանրաքարից:

Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է սեփական համակարգի միջոցով՝ օրական 12 ժամ ջրամատակարարման գրաֆիկով: Վերանորոգման և ընդլայնման կարիք ունի ցանի առանձին հատվածներ:

Բնակավայրը կոյուղացված չէ, կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակերում առկա խորքային հորերի միջոցով:

Գյուղը գազաֆիկացված չէ:

Բնակավայրում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում:

Բակերի սանիտարական մաքրությունն ապահովվում է տնային տնտեսությունների կողմից, իսկ հասարակական նշանակության տարածքների մաքրությունը՝ սանիտարական օրեր և աղբահանություն կազմակերպելու միջոցով: Բնակավայրը չունի նաև կառուցապատ աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի մաքրության վրա:

Ընդլայնման կարիք ունի բնակավայրում փողոցային լուսավորության ցանցը:

Գերեզմանատունը ցանկապատված է:

ԳՅՈՒՂ ՄԵՂՐԱՇԱՏ

Բնակավայրը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղի կառուցապատ տարածքը կազմում է 37.35 հա, որում առկա են տիպային և անհատական նախագծերով կառուցված թվով 96 բնակելի տներ՝ 8858 քառ. մետր ընդհանուր մակերեսով, ինչպես նաև օժանդակ, հասարակական և արտադրական նշանակության տարբեր շենքեր և շինություններ: Բնակֆոնդի 90 տոկոսը տուժել է Սպիտակի աղետալի երկրաշարժից և ունեն տարբեր աստիճանի վնասվածություններ: Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն 5 երիտասարդ ընտանիքներ, իսկ 3 բնակելի տների տների շինարարություն թողնված է անավարտ՝ կառուցողների միջոցների բացակայության պատճառով:

Համայնք մայրուղի ճանապարհի երկարությունը կազմում է 2 կմ է, որը վերանորոգման կարիք ունի: Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 4.5 կմ, որոնք ասֆալտե ծածկույթ չունեն, հողից են կամ մանրաքարից:

Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է ինքնահոս եղանակով 4.5 կմ ընդհանուր երկարության սեփական համակարգի միջոցով՝ շուրջօրյա ջրամատակարարմամբ: Ներքին ցանի առանձին հատվածներ վերանորոգման և ընդլայնման կարիք ունեն:

Բնակավայրը կոյուղացված չէ, կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակերում առկա խորքային հորերի միջոցով:

Գյուղը գազաֆիկացված է, 112 տնային տնտեսություններից գազից օգտվում են միայն 19-ը, որը բացատրվում տնտեսությունների սոցիալական վատ պայմաններով:

Բնակավայրում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում:

Բակերի սանիտարական մաքրությունն ապահովվում է տնային տնտեսությունների կողմից, իսկ հասարակական նշանակության տարածքների մաքրությունը՝ սանիտարական օրերի և պարբերաբար կազմակերպվող աղբահանության միջոցով: Բնակավայրը չունի նաև կառուցապատ աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի մաքրության վրա:

Ընդլայնման է ենթակա փողոցային լուսավորության ցանցը:

Ցանկապատման կարիք ունի Հայրենականի Մեծ պատերազմի զոհերի հուշարձանի տարածքը և գերեզմանատան 500 գծ. մետր հատվածը:

ԳՅՈՒՂ ՈՂՋԻ

Բնակավայրը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղի կառուցապատ տարածքը կազմում է 141.16 հա, որում առկա են թվով 93 տիպային և թվով 103 անհատական նախագծերով կառուցված բնակելի տներ՝ 15840 քառ. մետր ընդհանուր մակերեսով, որոնք հիմնականում կառուցվել են Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո: Գյուղում կառուցված է հանրակրթական դպրոց և վարչական շենք:

Ներհամայնքային ճանապարհների երկարությունը կազմում է 3.5 կմ, որոնք ասֆալտե ծածկույթ չունեն, հողից են կամ մանրաքարից: Իսկ Ողջի-Հայկավան, Ողջի- Մեղրաշատ, Ողջի-Բյուրակն միջհամայնքային ճանապարհները քայքայված են և վերանորոգման կարիք ունեն:

Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է ինքնահոս եղանակով 4.5 կմ ընդհանուր երկարության կենտրոնացված ջրատարով՝ շուրջօրյա ջրամատակարարմամբ: Բնակավայրը մատակարարվող ջրի քանակության ավելացման, ներքին ցանի առանձին հատվածներ վերանորոգման և ընդլայնման կարիք ունի:

Բնակավայրը կոյուղացված չէ, կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակերում առկա խորքային հորերի միջոցով:

Գյուղը գազաֆիկացված է, 185 տնային տնտեսություններից գազից օգտվում են միայն 10-ը, որը բացատրվում տնտեսությունների սոցիալական վատ պայմաններով:

Բնակավայրում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում:

Բակերի սանիտարական մաքրությունն ապահովվում է տնային տնտեսությունների կողմից, իսկ հասարակական նշանակության տարածքների մաքրությունը՝ սանիտարական օրերի և պարբերաբար կազմակերպվող աղբահանության միջոցով: Բնակավայրը չունի նաև կառուցապատ աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի մաքրության վրա:

Ընդլայնման է ենթակա փողոցային լուսավորության ցանցը:

ԳՅՈՒՂ ԶՐԱԶՈՐ

Բնակավայրը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղի կառուցապատ տարածքը կազմում է 75.54 հա, որում առկա են թվով 101 անհատական բնակելի տներ՝ 12300 քառ. մետր ընդհանուր մակերեսով, ինչպես նաև, հասարակական, բնակելի օժանդակ և արտադրական նշանակության տարբեր շենքեր և շինություններ:

Համայնք մայրուղի ճանապարհը և ներհամայնքային ճանապարհները ասֆալտի ծածկույթ չունեն, քայքայված են, հողից են կամ մանրաքարից:

Բնակավայրի ջրամատակարարումը իրականացվում է կենտրոնացված համակարգի միջոցով՝ շուրջօրյա ջրամատակարարման գրաֆիկով: Վերանորոգման և ընդլայնման կարիք ունի ցանի առանձին հատվածներ:

Բնակավայրը կոյուղացված չէ, կեղտաջրերի հեռացումը կատարվում է բակերում առկա խորքային հորերի միջոցով:

Գյուղը գազաֆիկացված չէ:

Բնակավայրում կանոնավոր աղբահանություն չի իրականացվում:

Բակերի սանիտարական մաքրությունն ապահովվում է տնային տնտեսությունների կողմից, իսկ հասարակական նշանակության տարածքների մաքրությունը՝ սանիտարական օրեր և աղբահանություն կազմակերպելու միջոցով: Բնակավայրը չունի նաև կառուցապատ աղբավայր, որն իր բացասական ազդեցությունն է թողնում շրջակա միջավայրի մաքրության վրա:

Ընդլայնման կարիք ունի բնակավայրում փողոցային լուսավորության ցանցը:

1.7 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 20468.3 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 18453.76 հա, բնակելի շինությունների տակ հողեր՝ 911.05 հա, արդյունաբերական, արտադրական շինությունների տակի հողեր՝ 8.66 հա, ընդերքօգտագործման հողեր՝ 109.37 հա, ճանապարհների տակի հողեր՝ 57.68 հա, առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր՝ 210.21 հա, հատուկ պահպանվող տարածքներ՝ 210.21 հա, անտառային ֆոնդի հողեր՝ 108.52 հա, ջրային ֆոնդի հողեր՝ 249.79 հա:

1991 թվականին հանրապետությունում իրականացված հողի սեփականաշնորհման ժամանակ խոշորացված Ամասիա համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում սեփականաշնորհված հողերի վերաբերյալ տվյալները ներկայացված են **աղյուսակ 4-ում**:

Աղյուսակ 4. խոշորացված Ամասիա համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում սեփականաշնորհված հողերը

	Բնակավայրը	Սեփականաշնորհված հողամասի	Միջինը, քանի հողաբաժին է ստացել յուրաքանչյուր տնտեսություն	Քանի կտորով է ստացել	Սեփականաշնորհված հողամասի միջին չափը
1	Ամասիա	1.50	1	2	1.50
2	Արեգնադեմ	3.00	2	2	6.00
3	Բանդիվան	3.00	2	7	6.00
4	Բյուրակն	3.00	2	2	6.00
5	Գտաշեն	1.75	2	1	3.50
6	Հովտուն	3.00	2	4	6.00
7	Մեղրաշատ	3.00	2	3-4	6.00
8	Ողջի	3.00	1	1	3.00
9	Զրաձոր	2.75	2	10-11	5.50

Հավելված 3-ում բերված են 01.01.2016թ. դրությամբ համայնքի վարչական տարածքի հողերի վերաբերյալ տվյալներն՝ ըստ հողատեսքերի և առանձին բնակավայրերի:

1.9 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի գյուղատնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը դաշտավարությունն ու անասնապահությունն է:

Համայնքում գյուղատնտեսական նշանակության հողերի ոռոգման համակարգերի սակավության, եղածների քայքայվածության, ինչպես նաև բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների պատճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Համայնքում ավելի զարգացած է անասնապահության ճյուղը: Համայնքում առկա արոտներն ու խոտհարքները լիարժեք բավարարում են գյուղացիական տնտեսությունների կողմից պահվող անասունների արածեցման և կերապահովման համար: Ավելին, համայնքի վարչական սահմաններում գտնվող շատ արոտներ վարձակալության են տրվում այլ համայնքների արոտօգտագործողների:

Վարելահողերի զգալի մասը չմշակելու պատճառով դրանք աստիճանաբար վերածվել են խոտհարքների և բնական կերհանդակների:

Համայնքում առկա 1485.7 հա ոռոգելի վարելահողեր, որի տեսակարար կշիռը վարելահողերի ընդհանուր կզմում .. տոկոս է:

Ոռոգման համակարգի բացակայության, իսկ եղածների քայքայվածության պատճառով համայնքը լուրջ ժվարությունների առաջ է կանգնած գյուղատնտեսական մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու համար:

Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 16756.84 հա, որից վարելահողեր՝ 6346.17 հա (քաղաքացիների սեփականություն՝ 4245.07 հա, համայնքի սեփականության՝ 1944.88 հա, պետության սեփականության՝ 137 հա), բազմամյա տնկարքներ՝ 5.86 հա, խոտհարքներ՝ 1229.08 հա, արոտավայրեր 8395.93 հա, այլ հողատեսքեր՝ 779.80 հա:

Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերի բաշխումը ըստ սեփականության սուբյեկտների և հողատեսքերի բերված են աղյուսակում՝

Հողատեսք, գործառնական նշանակություն	Ընդամենը	սեփականության սուբյեկտ									
		ՀՀ քաղաքացիների	ՀՀ իրավաբանական անձանց	համայնքային				պետական			
				ընդամենը	տրված անհատույց օգտագործման	տրված վարձակալության օգտագործման	վարձակալության չտրված	ընդամենը	տրված անհատույց օգտագործման	տրված վարձակալության օգտագործման	վարձակալության չտրված
0	1	2	3	4	5	6	7	8	9	10	11

վարելահողեր	6346.17	4245.07	19.22	1944.88		701.67	1243.21	137.00		137.00	
բազմամյա տնկարկներ, ընդամենը	5.86			5.86		5.86					
այդ թվում՝ պտղատու այգիներ	0.0										
խաղողի այգիներ	0.0										
այլ բազմամյա տնկարկներ	0.0										
խոտհարքներ	1229.08	79.99		742.64		125.39	617.25	748.13		406.45	341.68
արոտավայրեր	8395.93	18.96	38.96	7761.11		199.36	7561.75	1549.54		576.90	972.64
այլ հողատեսքեր	779.80	1.64	15.24	762.92		6.47	756.45	309.40			309.40
Ընդամենը	16756.84	4345.66	73.42	11217.41		1038.75	10178.66	2744.07		1120.35	1623.72

Համայնքի բնակիչների սեփականությունը հանդիսացող 4245.07 հա վարելահողերից ոռոգելի են 1485.7 հա-ը (տեսակարար կշիռը՝ 35 %), իսկ փաստացի ոռոգվում է 783 հա (52.7 %):

Բնակչության սեփականությունը հանդիսացող ոռոգելի արելահողերը՝ ըստ բնակավայրերի

Հ/հ	Համայնքը	Բնակչության սեփականությունը հանդիսացող ոռոգելի վարելահողերը՝ ըստ հողային հաշվեկշռի (հա)		Փաստացի ոռոգվող (հա)	Տեսակարար կշիռը ոռոգելի հողերի կազմում
		Ինքնահոս Եղանակով ոռոգվող հողեր	Մեխանիկական եղանակով ոռոգվող հողեր		
1	Ամասիա	12.0	0	0.0	
2	Արեգնադեմ	175.2	0	60.0	
3	Բանդիվան	57.6	0	0	
4	Բյուրակն	285.3	0	280	

5	Գտաշեն	203.8	0	63	
6	Հովտուն	0.0	0	0	
7	Մեղրաշատ	446.0	0	240	
8	Ողջի	294.6	0	200	
9	Զրաձոր	11.2	0	0	
	Ընդամենը	1485.7	0	783	

Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, կարտոֆիլի, կաղամբի և բանջարա- բոստանային այլ կուլտուրաների մշակությամբ: Վերջին տարիներին համայնքում զգալիորեն ավելացել է կարտոֆիլի մշակության ծավալները:

Համայնքի տարածքում 2 հատ հակակարկտային կայանքներ են տեղադրված Մեղրաշատ և 3 հատ Ողջի գյուղերում: Մնացած 7 բնակավայրերում հակակարկտային կայանքներ տեղադրված չեն և գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետությունը հիմնականում կախված է բնակլիմայական բարենպաստ պայմաններից և ոռոգման հնարավորություններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են ցրտահարությամբ, կարկտահարությամբ և երաշտով: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմանների դեպքում կազմում է 20-25 ցենտներ: Երաշտի, ցրտահարության կամ կարկտահարության դեպքում կորուստը կարող է կազմում է 50-100%:

Արոտների լիարժեք և արդյունավետ օգտագործմանը մեծապես նպաստել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի շրջանակներում վերջին 5 տարիներին համայնքի վարչական տարածքներում իրականացված արոտների և խոտհարքների բարելավման ու ջրարբիացման աշխատանքների կատարումը: Արոտավայրերի հեռահար տարածքներում տեղադրվել են անասունների խմոցներ, կառուցվել են փարախներ և անասնապահների տնակներ: Համայնքի Արեգնաղեմ, Գտաշեն, Ամասիա և Մեղրաշեն բնակավայրերում գործում են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվները, որոնք մատուցում են գյուղատնտեսական աշխատանքների ծառայություններ, հատկապես՝ խոտհնձի և արոտների արդյունավետ օգտագործման բնագավառներում:

Իրականացված աշխատանքներն իրենց դրական ազդեցությունն են ունեցել կաթնատվության և մթերատվության բարձրացման վրա: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, համայնքի խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կազմել է 7281, այդ թվում կովեր՝ 3784:

Ոչխարների և այծերի գլխաքանակը կազմել է՝ 12204, ձիերի՝ 35, հավերի և այլ թռչունների՝ 11464, մեղվաընտանիքների քանակը՝ 1618: Ամասիա, Արեգնադեմ, Բանդիվան, Մեղրաշատ և Ողջի գյուղերի գյուղացիական տնտեսությունները մեծ հաջողություններ ունեն մեղվապահության բնագավառում:

Գյուղատնտեսական մեքենաների ու մեխանիզմների գերակշռող մասը բարոյապես ու ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի մեծ պահանջարկ:

Մտորեն ներկայացված է ըստ բնակավայրերի գյուղացիական տնտեսությունների և համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի վերաբերյալ տեղեկատվությունը՝

Հ/հ	Համայնքը	Համայնքի և/կամ նրա բնակիչների սեփականություն հանդիսացող Տրակտորների քանակը	Համայնքի և/կամ նրա բնակիչների սեփականություն հանդիսացող այլ գյուղատնտեսական մեքենաների քանակը
		Ընդամենը	Ընդամենը
1	Ամասիա	0	0
2	Արեգնադեմ	15	0
3	Բանդիվան	4	0
4	Բյուրակն	17	2
5	Գտաշեն	3	2
6	Հովտուն	11	0
7	Մեղրաշատ	17	4
8	Ողջի	8	2
9	Զրաձոր	1	0
	Ընդամենը	61	10

Հավելված 4-ում բերված է, 01.01.2016թ. դրությամբ, համայնքի բնակավայրերում առկա անասնազվաքանակի վերաբերյալ տվյալներն՝ ըստ առանձին բնակավայրերի:

1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի վարչական սահմաններում գտվող հատուկ պահպանվող տարածքները կազմում են 210.21 հա, որից 189.75 հա ընդգրկված է «Արփի լիճ» ազգային պարկի հողերի կազմում: Համայնքի 108.52 հա անտառային ֆոնդի պահպանությունն իրականացվում է անտառտնտեսության կողմից:

Ամասիա գյուղի անմխիթար վիճակում գտնվող աղբավայրը և համայնքի մյուս բնակավայրերում կառուցապատ աղբավայրեր չլինելու հանգամանքը մեծապես վնասում են բնությանը և շրջակա միջավայրին: Համայնքի գյուղական բնակավայրերի տնային տնտեսություններն իրենց կենցաղային աղբն անթույլատրելիորեն թափում են այնտեղ, որտեղ հարմար են գտնում: Այդ ուղղությամբ կարիք կա լայն բացատրական աշխատանք կատարել բնակչության հետ՝ զերծ մնալու բնության և շրջակա միջավայրի աղտոտումից: Համայնքն իր ուժերով ի վիճակի է լուծելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպումը, այդ ուղղությամբ անհրաժեշտ է պետական մարմինների աջակցությունը նոր աղբավայրի կառուցման հարցում կամ ընդգրկվել կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի Բենյամին համայնքի տարածքում կառուցվող աղբավայրից:

Վիճակն անմխիթարական է նաև հանդամասերից հոսող խմելու ջրային ավազաններում, որոնց որոշ հատվածներում ջուրը՝ մինչև ջրամբար կամ փակ համակարգ հասնելը, հոսում է բաց վիճակում, որտեղ անարգել մուտք են գործում անասուններ և վայրի կենդանիներ: Դա հղի է սուր վարակիչ հիվանդությունների բռնկման վտանգով:

Բացառությամբ Ամասիա գյուղի, մնացած բնակավայրերը չունեն կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգեր: Կեղտաջրերի հեռացումը կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով: Ամասիայի կեղտաջրերի հեռացման համակարգը չունի մաքրման կայան, իսկ ցանցը գտնվում է անմխիթար վիճակում:

Բացառությամբ Ամասիա գյուղի մնացած բնակավայրերը չունի համայնքային նշանակության հանգստի գոտիներ: Հատկապես ամռան ժամանակաշրջանում բարձր է օդի աղտոտվածությունը:

Բնակավայրերում վտանգավոր արտանետումներ չկան:

Համայնքի տարածքում գրանցված են ընդերքօգտագործման իրավունք կրող 3 ձեռնարկություններ, որոնցից Բանդիվան գյուղի տարածքում գործում է միայն տուֆ քարի արդյունահանում իրականացնող <<ԴԱՆՍԱՌ>> ՍՊԸ-ն:

Բնության և շրջակա միջավայրի պահպանման ուղղությամբ անելիքներ ունեն նաև համայնքում գործող արտադրական կազմակերպությունները, որոնց գործունեության նկատմամբ անհրաժեշտ է ՏԻՄ-երի մշտական վերահսկողությունը:

1.11 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ԿԱՊ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակավայրերը կենտրոնին կապող միջբնակավայրային ճանապարհները հիմնականում խճապատ են և վատ սպասարկման պատճառով առանձին հատվածներ դարձել են դժվար անցանելի, իսկ ձմռան ժամանակահատվածում երբեմն նաև անանցանելի: Համայնքի բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհները գտնվում են անբարեկարգ վիճակում: Համայնքի դինամիկ սակազմող հնարավորությունները թույլ են տալիս իրականացնել միայն դժվարանցանելի հատվածների փոսալցման աշխատանքներ: Ճանապարհների բարեկարգման և սպասարկման գործում անհրաժեշտ է պետական աջակցություն: Համայնքի կենտրոնում տեղակայված են ճանապարհային երթևեկության նշաններ, իսկ մյուս գյուղերում դրանք բացակայում են: Բնակավայրերի ներսում ավտոկանգառներ չկան: Համայնքում գրեթե բացակայում է միջբնակավայրային հասարակական տրանսպորտը: Գործում են միայն մարզկենտրոն տանող և հետադարձ երթուղիները, որոնք անցնում են համայնքում ընդգրկված բնակավայրերով: Կան բնակավայրեր, որտեղ ուղևորափոխադրումները կատարվում են շաբաթական 2-3 անգամ: Համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակչությունը տեղաշարժվելու լուրջ դժվարություններ ունեն և սահմանափակ հնարավորություններ՝ օգտվելու այլ բնակավայրերում մատուցվող տրանսպորտային ծառայություններից:

Համայնքի բնակավայրերով անցնող տրանսպորտի միջոցների հաճախականությունը ունի հետևյալ պատկերը՝

Հ/հ	Համայնքը	Ինչ հաճախությամբ են տրանսպորտի միջոցները անցնում համայնքի տարածքով						
		Ժամում 1 կամ ավելի անգամ	Օրական 5 կամ ավելի անգամ	Օրական 2-4 անգամ	Օրական 1 անգամ	Շաբաթը 2 կամ ավելի անգամ	Շաբաթական 1 անգամ	Ամսվա մեջ 1 կամ 2 անգամ
1	Ամասիա		v					
2	Արեգնադեմ				v			
3	Բանդիվան					v		

4	Բյուրակն		v					
5	Գտաշեն					v		
6	Հովտուն					v		
7	Մեղրաշատ	v						
8	Ողջի		v					
9	Ջրաձոր		v					

Ինչպիսի միջհամայնքային կամ ներհանրապետական հասարակական տրանսպորտից է օգտվում բնակչությունը՝

Հ/հ	Համայնքը	Ավտոբուս	Միկրոավտոբուս	Երկաթուղի/գնացք	Մինչև մարզկենտրոն հասնելու մեկ ուղևորի ճանապարհավարձը (դրամ)
1	Ամասիա	0	2	0	400
2	Արեգնադեմ	1	0	0	350
3	Բանդիվան	1	0	0	450
4	Բյուրակն	0	2	0	300
5	Գտաշեն	1	0	0	350
6	Հովտուն	1	0	0	500
7	Մեղրաշատ	0	2	0	400
8	Ողջի	0	2	0	200
9	Ջրաձոր	1	2	0	300

Ստորև ներկայացված է համայնքի և նրա բնակիչների սեփականություն հանդիսացող մեքենաների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը՝

Հ/հ	Համայնքը	Համայնքի և կամ նրա բնակիչների սեփականություն հանդիսացող մեքենաների քանակը				
		Ընդամենը	Մարդատար ավտոմեքենաներ	Բեռնատար ավտոմեքենաներ	Ավտոբուս	Միկրոավտոբուսներ /երթուղային տաքսիներ
1	Ամասիա	220	204	13	2	1
2	Արեգնադեմ	42	36	6	0	0
3	Բանդիվան	32	27	5	0	0
4	Բյուրակն	76	68	8	0	0
5	Գտաշեն	24	22	2	0	0
6	Հովտուն	12	10	1	1	0
7	Մեղրաշատ	44	38	6	0	0
8	Ողջի	41	32	7	0	2
9	Զրաձոր	39	35	4	0	0
	Ընդամենը	530	472	52	3	3

Անբարեկարգ և քայքայված վիճակում են նաև դաշտամիջյան ճանապարհները: Տեղումների ժամանակ առանձին տեղամասեր անանցանելի են դառնում տրանսպորտային միջոցների և գյուղատնտեսական տեխնիկայի համար, որը լուրջ դժվարություններ է ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ժամանակ:

Միջհամայնքային և ներբնականարանային ճանապարհների տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է <<**1.6. Քաղաքաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն**>> բաժնում:

Փոստային բաժանմունքներ ունեն 5 բնակավայրեր, որոնք սպասարկում են նաև հարևան բնակավայրերի բնակչությանը:

Ֆիկսված հեռախոսակապով են ապահովված 3 բնակավայրեր:

Բնակավայրը հիմնականում ապահովված են բջջային կապով:

Բնակավայրերը ընդունում են 4 հանրապետական և 2 մարզային հեռուստաալիքներ:

Բնակավայրերում փոստային բաժանմունքների, ֆիկսված հեռախոսակապի և բջջային կապ վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակների տեսքով՝

Փոստային բաժանմունքներ

Հ/հ	Համայնքը	Փոստ/միջքաղաքային կապի հանգույցի առկայությունը համայնքում		Փոստ/միջքաղաքային կապի հանգույցների քանակը		Փոստ /միջքաղաքային հանգույցներում զբաղվածների թվաքանակը
		Այո	Ոչ	Ընդամենը	Գործող	Ընդամենը
1	Ամասիա	v		1	1	5
2	Արեգնադեմ	v		1	1	1
3	Բանդիվան		v	0	0	0
4	Բյուրակն	v		1	1	1
5	Գտաշեն	v		1	1	1
6	Հովտուն		v	0	0	0
7	Մեղրաշատ		v	0	0	0
8	Ողջի	v		1	1	1
9	Զրաձոր		v	0	0	0

Ֆիկսված հեռախոսակապ

Հ/հ	Համայնքը	Քանի տնային տնտեսություն ունի ֆիքսված հեռախոսակապ	Ֆիքսված հեռախոսակապի որակը համայնքում				
		Ընդամենը	Շատ վատ	Վատ	Միջին	Լավ	Գերազանց

1	Ամասիա	390				v	
2	Արեգնադեմ	10				v	
3	Բանդիվան	0			v		
4	Բյուրակն	15					v
5	Գտաշեն	0			v		
6	Հովտուն	0			v		
7	Մեղրաշատ	0				v	
8	Ողջի	0			v		
9	Զրաձոր	0			v		

Բջջային հեռախոսակապ

Հ/հ	Համայնքը	Համայնքի ապահովվածությունը բջջային հեռախոսակապով		Բջջային հեռախոսակապի որակը համայնքում				
		Այո	Ոչ	Շատ վատ	Վատ	Միջին	Լավ	Գերազանց
1	Ամասիա	v						v
2	Արեգնադեմ	v					v	
3	Բանդիվան	v					v	
4	Բյուրակն	v						v
5	Գտաշեն	v					v	
6	Հովտուն	v					v	
7	Մեղրաշատ	v				v		
8	Ողջի	v					v	
9	Զրաձոր	v					v	

1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործող առևտրի օբյեկտների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է **աղյուսակ 5-ում**:

Հ/հ	Համայնքը	Մանրաձախ առևտրի Գործող օբյեկտների քանակը			
		Ընդամենը	Խանութների /հանրախանութներ	Կրպակներ /վաճառասեղաններ	Շուկա/տոնավ աճառներ
1	Ամասիա	10	9	1	0
2	Արեգնադեմ	1	1	0	0
3	Բանդիվան	1	1	0	0
4	Բյուրակն	2	2	0	0
5	Գտաշեն	1	0	1	0
6	Հովտուն	0	0	0	0
7	Մեղրաշատ	0	0	0	0
8	Ողջի	2	0	2	0
9	Զրաձոր	0	0	0	0
	Ընդամենը	17	13	4	0

Առևտրի օբյեկտները հիմնականում զբաղվում են սննդի որոշ տեսակների, ծխախոտի, ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով: Նրանք բոլորն էլ հաշվառված են պետական հարկային մարմնում, ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջե՝ գործունեության թույլտվության համար: Շամուտում գործող առևտրի կետ չկա:

Ամասիա գյուղում գործում է նաև հանրային սննդի, ավտոմեքենաների գազալիցքվորման և հողուկ վառելիքի լիցքավորման մեկական կետեր:

Համայնքի բնակավայրերում ծառայություններ մատուցող կազմակերպություններ չկան:

1.13 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ըստ համայնքի առանձին բնակավայրերի հանրակրթության ոլորտում առկա իրավիճակը ներկայացվում է աղյուսակի տեսքով՝

	Բնակավայրը	Միջնակարգ դպրոցների թիվը		Միջնակարգ դպրոցներում զբաղվածների թվաքանակը	Ուսուցիչների թվաքանակը համայնքում				Միջնակարգ դպրոցներում սովորողների թվաքանակը			Դպրոցական շենքերի հետ կապված խնդիրներ
		Ընդամենը	Գործող	Ընդամենը	Ընդամենը	Իգական	Արական	Բարձրագույն կրթությամբ	Ընդամենը	Արական	Իգական	
1	Ամասիա	1	1	32	23	21	2	21	168	96	72	Կարիք ունի ընթացիկ վերանորոգման և գույքի նորացման
2	Արեգնադեմ	1	1	8	7	4	3	7	35	11	24	Անհրաժեշտ է կառուցել դպրոցի նոր շենք և կահավորել գույքով
3	Բանդիվան	1	1	18	15	13	2	15	64	23	41	Տանիքը ենթակա է հիմնանորոգման
4	Բյուրակն	1	1	24	20	13	7	20	69	31	38	Կարիք ունի ընթացիկ վերանորոգման և գույքի նորացման
5	Գտաշեն	1	1	20	14	10	4	14	38	16	22	Կարիք ունի ընթացիկ վերանորոգման և գույքի նորացման
6	Հովտուն (տարրական)	0	0	0	7	5	2	5	5	3	2	Տանիքը ենթակա է հիմնանորոգման
7	Մեղրաշատ	1	1	16	13	11	2	13	53	19	34	Կարիք ունի ընթացիկ

												վերանորոգման և գույքի նորացման
8	Ողջի	1	1	19	15	13	2	12	40	21	19	Կարիք ունի ընթացիկ վերանորոգման և գույքի նորացման
9	Ջրաձոր	1	1	18	15	10	5	15	28	12	16	Կարիք ունի ընթացիկ վերանորոգման և գույքի նորացման
	Ընդամենը	8	8	155	129	100	29	122	495	229	266	

Հովտունի համայնքում գործում է տարրական դպրոց, որտեղ զբաղված են 5 աշխատողներ և հաճախում են ընդամենը 3 երեխաներ:

Համայնքային ենթակայության նախակրթարան ունի միայն Ամասիա բնակավայրերը, իսկ դպրոցահեն նախակրթարան՝ Բյուրակն, Մեղրաշատ և Ողջի բնակավայրերը, որտեղ հաճախում են տվյալ բնակավայրերի 3-6 տարեկան :

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների և դպրոցահեն նախակրթարանների վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակի տեսքով՝

Բնակավայրը	Նախադպրոցական ուսումնական հաստատություններ									Դպրոցահեն նախակրթարաններ								
	Քանակ ը	Զբաղվա ծների թիվը	Երեխանե րի քանակը	Այդ թվում						քան ակը	զբաղվ ածներ ի թիվը	երեխա ների քանակ ը	Այդ թվում					
				3-4 տարեկան			5-6 տարեկան						3-4 տարեկան			5-6 տարեկան		
	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Արական	Իգական	Ընդամենը	Արական	Իգական	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը	Արական	Իգական	Ընդամենը	Արական	Իգական
Ամասիա	1	15	60	32	17	15	28	12	16	0	0	0	0	0	0	0	0	0

Արեգնադեմ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Բանդիվան	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Բյուրակն	0	0	0	0	0	0	0	0	0	1	2	34	20	10	10	14	9	5
Գտաշեն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հովտուն	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Մեղրաշատ	0	0	0	0	0	0	0	0	0	1	2	12	5	2	3	7	4	3
Ողջի	0	0	0	0	0	0	0	0	0	1	4	20	8	4	4	12	6	6
Ջրածոր	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	1	15	60	32	17	15	28	12	16	2	8	66	33	16	17	33	19	14

1.14 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Համայնքը հարուստ չէ մշակութային օջախներով և պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով:

Պատմամշակութային արժեքների սակավությունը բացատրվում է նրանով, որ համայնքի բնակավայրերի մեծ մասը մինչև 1988 թվականը բնակեցված են եղել ագերիներով:


Դրանով հանդերձ, համայնքի տարածքում պահպանվել և մեզ են հասել հուշարձաններ, որոնք պատմամշակութային մեծ արժեք են ներկայացնում:



Գտաշենի Սբ. Կարապետ եկեղեցի
(վերանորոգվել է 2015թ)



Մեղրաշատի եկեղեցի



Կամխուտի եկեղեցի (ավերված)



Եղնաջուրի եկեղեցի (վերանորոգվել է 2005թ)



Բանդիվանի Սբ. Աստվածածին եկեղեցի, կառ.1909թ. (վերանորոգվել է 2016)

Համայնքի մշակութային հաստատություններն են՝
Ամասիայի համայնքային կենրոնը,
Ամասիայի մարզահամերգային կենտրոնը,
Ամասիայի արվեստի դպրոցը,
Գտաշենի մշակույթի տունը, որը վերանորոգման կարիք ունի:

Համակարգչային կենտրոններ են գործում Բյուրակն և Մեղրաշատ գյուղերում, որտեղ ներգրավված են 170 երիտասարդներ և պատանիներ:

Համայնքի մյուս բնակավայրերում մշակութային նշանակության օբյեկտներ չկան, այստեղ անտեսված են բնակչության, հատկապես երիտասարդության հետ տարվող աշխատանքները:

Այս բնագավառում անհրաժեշտ է լուրջ ներդրումներ կատարել՝ բնակչության, հատկապես երիտասարդության մշակութային կյանքը աշխուժացնելու և բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման համար պայմաններ ստեղծելու համար:

Գրադարաններ կան համայնքի 5 բնակավայրերում, իսկ մնացած բնակավայրերում գրադարանները գործում են հանրակրթական դպրոցներում:

Գրադարանները վերանորոգման և գրքային ֆոդի թարացման կարիք ունեն:

Գրադարանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակի տեսքով՝

Հ/հ	Բնակավայրը	Գրադարանների թիվը		Գրադարաններում գրադվածների թվաքանակը	Գրադարաններում ընդգրկվածների/այցելուների թվաքանակը
		Ընդամենը	Գործող	Ընդամենը	Ընդամենը
1	Ամասիա	1	1	4	870
2	Արեգնադեմ	0	0	0	0
3	Բանդիվան	1	1	1	23
4	Բյուրակն	0	0	0	0
5	Գտաշեն	1	1	1	15
6	Հովտուն	1	1	1	20
7	Մեղրաշատ	0	0	0	0
8	Ողջի	0	0	0	0
9	Ջրաձոր	1	1	1	32
	Ընդամենը	5	5	8	960

1.15 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքի միակ առողջության կենտրոնը «Ամասիայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ն է, որտեղ զբաղված են 26 աշխատող, նրանցից 10-ը բժիշկներ են, այդ թվում 1 մանկաբույժ, իսկ 16 բուժքույրեր և սանիտարական աշխատողներ: Կենտրոնն ապահովված է խմելու ջրով, կոյուղով, բժշկական սարքավորումներով, առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով: Առողջության կենտրոնը չունի ստացիոնար բաժանմունք: Մասնակի վերանորոգման կարիք ունի առողջության կենտրոնի շենքը:

ՊՓԲԸ-ն սպասարկում է նաև համայնքի մյուս բնակավայրերի բուժակմանկաբարձական կետերը: Բուժակմանկաբարձական կետեր կան համայնքի բոլոր բնակավայրերում, որտեղ աշխատում են մեկական բուժքույրեր, իսկ Գտաշենի բուժմանկաբարձական կետի աշխատողը մարկաբույժ է:

Համայնքի առողջապահական հաստատությունների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է աղյուսակի տեսքով՝

Հ/հ	Բնակավայրը	Գյուղական առողջության կենտրոններ ի թիվը		Գյուղական առողջության կենտրոնում զբաղվածների թվաքանակը			Գյուղական առողջության կենտրոնում ըստ նախագծի մահճակալների թիվը	Հեռավորու- թյունը մոտակա գյուղական առողջության կենտրոնից	Բուժակ- մանկաբարձական կետ		
		Ընդամենը	Գործող	Ընդամենը	Մանկաբույժների թվաքանակը	Նեոնատոլոգների թվաքանակը	Ընդամենը		Առկա է	Աշխատողների թվաքանակը	Մանկաբույժների թվաքանակը
1	Ամասիա	1	1	26	1	0	0	0	0	0	0
2	Արեգնադեմ	0	0	0	0	0	0	4	1	1	0
3	Բանդիվան	0	0	0	0	0	0	5	1	1	0
4	Բյուրակն	0	0	0	0	0	0	18	1	1	0
5	Գտաշեն	0	0	0	0	0	0	10	1	1	1

6	Հովտուն	0	0	0	0	0	0	7	1	1	0
7	Մեղրաշատ	0	0	0	0	0	0	15	1	1	0
8	Ողջի	0	0	0	0	0	0	20	1	1	0
9	Զրաձոր	0	0	0	0	0	0	7	1	1	0
	Ընդամենը	1	0	26	1	0	0		8	8	1

Բոլոր բուժկետերը հիմնականում ապահովված են շենքային հարմարություններով, առաջին բուժօգնության պարագաներով և դեղորայքով:

Ամասիայում գործում է <<ԱՄԱՍԻԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ը, որտեղ գործում են տարբեր մարզանների 4 խմբակներ, հաճախում են 70 երեխաներ, զբաղվածների թիվը կազմում է՝ 7:

Ամասիայում առկա է մարզադաշտ և խաղահրապարակ, որը կառուցվել է 2016 թվականին <<Ամասիա>> բարեգործական հիմնադրամի և համայնքի միջոցներով: Պարբերաբար կազմակերպվում են ֆուտբոլի մրցումներ տարբեր համայնքների թիմերի մասնակցությամբ:

Մարզադահլիճով ապահովված է Ամասիայի միջնակարգ դպրոցը:

Համայնքի մյուս բնակավայրերում մարզադաշտ կամ մարզադահլիճներ չկան:

1.16 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքի բոլոր բնակավայրերի հարակից տարածքներում կան գեղատեսիլ վայրեր, բնական աղբյուրներ և հուշաղբյուրներ, որտեղ համայնքի բնակիչները և շատ այցելուներ անց են կացնում իրենց հանգիստը:

Միայն Ամասիա համայնքում է առկա կառուցապատ զբոսայգի՝ մանկական խաղահրապարակով և հանգստի գոտիներով:

Համայնքի մնացած բնակավայրերում չկան զբոսայգիներ և խաղահրապարակներ:

Ամասիայի մանկապարտեզի բակային տարածքում գործում է խաղահրապարակ, այն հիմնականում ծառայում է մանկապարտեզ հաճախող երեխաներին:

1.17 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 4051 աշխատունակ բնակչություն, որոնցից մշտական աշխատանքով զբաղված են 3201-ը, այդ թվում 2365 –ը գյուղատնտեսական թերբեռնված աշխատանքով, զբաղվածություն չունեն 850-ը, սակայն որպես գործազուրկներ, վերջիններից միայն

98-ն են գրանցված Ամասիայի զբաղվածության տարածքային կենտրոնում: Քանի որ համայնքի բնակիչները հիմնականում հանդիսանում են հողերի սեփականատերեր, ուստի ՀՀ օրենսդրության համաձայն նրանք չեն համարվում գործազուրկներ:

Համայնքի 1508 ընտանիքներից ...-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 127 ընտանիքները (8.4 %): Համայնքում հաշվառված են 619 կենսաթոշակույթներ, 134 հաշմանդամներ, որից 11-ը մանկուց հաշմանդամ: Միակողմանի ծնողազուրկ երեխաներ են 26-ը: Բակարանի կարիքավոր են 42 ընտանիքներ, բնակարանի բարելավման կարիք ունեն 98 ընտանիքներ:

Համայնքի ընտանիքների մեծ մասը սոցիալապես խոցելի են՝ բազմաբնույթ սոցիալ-առողջապահական խնդիրներով: Համայնքի բնակիչներին որոշակի սոցիալական ծառայություններ մատուցվում են Ամասիայի ՄՕՏԳ-ն, համայնքապետարանը, «Ամասիա» բարգործական հիմնադրամը առանձին անհատ ձեռներեցներ բարգործական կազմակերպություններ:

1.18 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում վերջին տարիների ընթացքում նկատելի էր որոշակի դրական տեղաշարժ նախկին համայնքների ՏԻՄ-երի և բնակչության փոխհարաբերություններում: Ներկայումս նոր ձևավորված ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային, որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Համայնքի բնակիչները սկսել են բավականին ակտիվորեն մասնակցել ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային քննարկումներին, հանդիպումներին ու միջոցառումներին: ՏԻՄ-երի ձևավորումից հետո բնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերում կազմակերպվում են հանրային լուսններ և քննարկումներ (մասնավորապես, համայնքի բյուջեի նախագծի, համայնքային ծրագրերի և այլնի շուրջ), տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման և վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, որոնց հաճույքով մասնակցում են ինչպես համայնքի ՏԻՄ-երը և աշխատակազմի մասնագետները, այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ: Հիմնականում բոլոր միջոցառումները, այդ թվում նաև ավագանու նիստերը, հեռարձակվում են առցանց տարբերակով՝ համայնքի ինտերնետային կայքի միջոցով, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը:

Համայնքի ավագանու կողմից ընդունվել են տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լուսնների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերը, որոնք մեծապես կնպաստեն բնակիչների ավելի ակտիվ մասնակցությանը տեղական ինքնակառավարմանը:

1.19 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համայնքում աղետների (բնածին և տեխնածին) ռիսկի կառավարման ոլորտը ներկայումս սաղմնային վիճակում է: Ավագանու որոշմամբ դեռևս չի ստեղծվել աղետների դեպքում համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովը, չի հաստատվել բնակչության տարահանման գործողությունների պլանը:

Համայնքում առայժմ չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման որևէ գործողություն, որի հիման վրա հնարավոր կլիներ պլանավորել ու իրականացնել համայնքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցման նպատակամետ գործողություններ ու միջոցառումներ: Այս խնդիրը կարևոր է, քանի որ համայնքի բնակավայրերում և հատկապես՝ միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհներին մեծ են քարաթափումների, սողանքների, հեղեղումների վտանգը:

Համայնքի տարածքում տեխնածին վտանգներ կամ քիմիական վտանգավոր արտանետումներ չկան:

1.20 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը սահմանափակվում է համայնքում գործող 12 արտադրական ընկերությունների և ԱԶ-ների, մանրածախ առևտրի 17 կետերի, 3 գյուղերի «Արոտ օգտագործողների սպառողական կոոպերատիվ»-ների գործունեությամբ, որոնց հետ ՏԻՄ-երը պաշտպանում են լավ ու բարյացկամ հարաբերություններ: Սակայն, դրանով հանդերձ, համայնքում բիզնեսի վիճակն առանձնապես բարվոք համարել չի կարելի:

Եվ այսպես, համայնքի և նրա կազմի մեջ մտնող բնակավայրերի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները բերված են **հավելված 5-ում**: Այդ ցուցանիշները երկու տեսակի են՝ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը (միջավայրը) բնութագրող (ոչ ֆինանսական) և ֆինանսական ցուցանիշներ:

Հիմնվելով համայնքում և նրա կազմի մեջ մտնող բնակավայրերում տիրող փաստացի իրավիճակի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքների վրա՝ կարելի է արձանագրել համայնքում ներկայումս առկա **ընդհանուր և ոլորտային հիմնական հիմնախնդիրները**:

Դրանք են՝

- համայնքի կազմի մեջ ընդգրկված բնակավայրերը չունեն գլխավոր հատակագիծ, համայնքը չունի քաղաքաշինական ծրագրային այլ փաստաթղթեր,
- համայնքի բոլոր բնակավայրերում խմելու ջրի ջրամատակարարման ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակ, ջրամատակարարման ոչ բավարար մակարդակ,
- համայնքի բնակավայրերի միջև տրանսպորտային հաղորդակցության և այս կամ այն բնակավայրում մատուցվող ծառայություններից օգտվելու սահմանափակ հնարավորությունները,
- Բացառությամբ Ամասիա և Գտաշեն գյուղերի, մնացած բնակավայրերում մշակույթի տների կամ համայնքային կենտրոնների կառուցում,
- Բացառությամբ Ամասիայի, մնացած գյուղական բոլոր բնակավայրերը չունեն ջրահեռացման կենտրոնացված համակարգ (կոյուղի), իսկ Ամասիայի կոյուղու համակարգը ենթակա է արդիականացման և ցանցի ընդլայնման,
- համայնքը չունի ժամանակակից աղբավայր, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազա և ֆինանսական հնարավորություններ՝ իր կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար,
- միջբնակավայրային և ճանապարհները և փողոցներն անբարեկարգ վիճակում են, մեծ մասը չունեն արտաքին լուսավորության համակարգ, ճանապարհային երթևեկության նշաններ,
- Ոռոգելի հողատարածքները սակավ են, որի պատճառով համայնքի գյուղատնտեսական նշանակության վարելահողերը մեծամասամբ չեն մշակվում, դրանք աստիճանաբար վեր են ածվել խոտհարքների, խիստ անհրաժեշտություն է սպանդանոցի կառուցումը,
- համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ՝ արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու հարցում,
- Բացառությամբ Ամասիա և Ողջի գյուղերի, մնացած բնակավայրերը չունեն մանակապարտեզ,
- Բացառությամբ Ամասիա, Մեղրաշատ և Ողջի գյուղերի, մնացած բնակավայրերում չկա գազամատակարարում,
- համայնքի գրեթե բոլոր դպրոցների շենքերը կարիք ունեն մասնակի կամ ամբողջական ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, տանիքների հիմնանորոգման, դուռ-պատուհանների, սանհանգույցների փոխարինման,
- համայնքի բնակավայրերի վարչական ներկայացուցիչների նստավայրերը, մանկապարտեզները, Ամասիայի արվեստի դպրոցը, բոլոր գյուղերի համայնքային սեփականություն համարվող գրադարանները, մշակույթի տները և ակումբները,

դպրոցների շենքերը, բոլոր բուժակմանկաբարձական կետերը չունեն ջեռուցման համակարգեր, որի պատճառով այդ հիմնարկները ձմռանը ստիպված են իրենց շենքերը տաքացնել էլեկտրական կամ պինդ վառելիքի վառարանների միջոցով,

- համայնքի գերեզմանատներից մի մասը ցանկապատված չեն կամ առկա է ցանկապատերի վերանորոգման խնդիր,
- համայնքի բոլոր բնակավայրերից տարեցտարի արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում դպրոցների աշակերտների, մանկապարտեզների սաների թվերի վրա, որոնք վերջին տարիներին անընդհատ նվազում են՝ իր բոլոր բացասական հետևանքներով հանդերձ,
- համայնքի աշխատունակ բնակչության մոտ 50 %-ը չունի մշտական աշխատանք, այդ պատճառով հաճախ բնակիչների մի մասը մեկնում է արտագնա աշխատանքի այլ երկրներ, մեկնողներից ոչ բոլորն են վերադառնում համայնք,
- համայնքի տարածքում առկա եկեղեցիների և մատուռների մի մասը կիսավեր վիճակում են:

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, ակնհայտ է, որ հնգամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2017-2021թթ. ՀԶԲԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԹՇՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Գյումրի-Վրաստան միջպետական նշանակության ճանապարհին մոտ գտնվելը,
- Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը,
- Ոռոգելի վարելահողերը ընդլայնելու համար բավարար ջրային ռեսուրսների առկայությունը,
- Օրգանական գյուղատնտեսության զարգացման, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության համար նպաստավոր պայմանները,
- Կաթի վերամշակման «Բանդիվան կաթ» և «Ամասիա կաթ» ձեռնարկությունների առկայությունը, կաթի մթերումների կազմակերպվածությունը

- Քարի (Տուֆ, բազալը) մեծ պաշարների առկայությունը,
- Համայնքի գեղատեսիլ բնությունը,
- «Արփի լիճ» ազգային պարկին և անտառամերձ տարածքներին մոտ գտնվելը, համայնքի բոլոր բնակավայրերի հարակից լինելը,
- Համայնքի բոլոր բնակավայրում հանրակրթական դպրոցների առկայությունը,
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը,
- Համայնքի բոլոր բնակավայրում ինքնահոս խմելու ջրի համակարգերի առկայությունը,
- <<Արփի լիճ>> ազգային պարկի տարածքում էկո և սպորտային տուրիզմի զարգացման հնարավորությունները,
- Համայնքի տարածքում պատմամշակութային հուշարձանների (եկեղեցիներ, մատուռներ) առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները,
- Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Համայնքի բոլոր բնակավայրերում խմելու ջրի ջրամատակարարման ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը և ջրամատակարարման ոչ բավարար մակարդակը
- Համայնքի 6 բնակավայրերում լուսավորության համակարգի բացակայությունը
- Համայնքի 7 բնակավայրերում մշակույթ տների կամ համայնքային կենտրոնների բացակայությունը,
- Գյուղական բոլոր բնակավայրերում (բացառությամբ Ամասիա գյուղի) ջրահեռացման կենտրոնացված համակարգերի (կոյուղու) և մաքրման կայանքների բացակայությունը
- Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը, ժամանակակից աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տնտեսական բազայի և ֆինանսական հնարավորությունների բացակայությունը
- Ոռոգման ներհամայնքային և ներբնակավայրային համակարգերի պակասը
- Գյուղացիական տնտեսությունների արտադրական փոքր կարողությունները:
- Գյուղատնտեսական տեխնիկայի պակասը, առկա տեխնիկայի մաշվածությունը:

- Միջբնակավայրային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային և համայնքի կենտրոնների հետ
- Բացառությամբ Ամասիա, Մեղրաշատ և Ողջի գյուղերի, մնացած բնակավայրերում գազամատակարարման բացակայությունը,
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ թիվը
- Աթան, Շամուտ, Ահնիձոր, Մարց բնակավայրերում մանկապարտեզների բացակայությունը, Քարինջում մանկապարտեզի մասնակի գործելը
- Համայնքի վարչական ներկայացուցիչների նստավայրերի, մանկապարտեզների, բուլոր գյուղերի համայնքային սեփականություն համարվող գրադարանների, մշակույթի տների, ակումբների, դպրոցների, գրեթե բոլոր բուժական կաբարձական կետերի շենքերում ջրի և (կամ) ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում
- Համայնքի բոլոր բնակավայրերից տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները
- Տեղական հարկերի և հողերի վարձակալական վճարների հավաքագրման դժվարությունները
- Համայնքի գերեզմանատներից մի մասի ցանկապատված չլինելը կամ ցանկապատերի վերանորոգման խնդիրը
- Համայնքի տարածքում առկա եկեղեցիների և մատուռների մի մասի կիսավեր վիճակը, բնակչության հոգևոր կարիքների բավարարմանը չնպաստելը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համախմբել նախկին փոքր համայնքներում առկա մարդկային, գույքային ու ֆինանսական ռեսուրսները և ապահովել օրենքով ՏԻՄ-երին վերապահված սեփական լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը
- Խելամտորեն օգտագործել ստեղծված հնարավորությունը, որ համայնքը ձևավորվել է համայնքների խոշորացման պետական փորձնական ծրագրով, գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների

ուշադրության կենտրոնում, աստիճանաբար մեծացնել համայնքում առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավվածության շրջանակները

- Խթանել ՔՀՄՀ-ից որակյալ մասնագետների հոսքը համայնքի աշխատակազմ և համայնքային կազմակերպություններ՝ հնարավորինս բարձրացնելով համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը
- Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ ավելի որակյալ մասնագետների աշխատանքի, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման
- Բարձրացնել ՏԻՄ-երի ինքնուրույնության մակարդակը՝ մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր
- Աստիճանաբար ընդլայնել համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների շրջանակը, կիրառել յուրաքանչյուր ծառայության մատուցման մասշտաբի էֆեկտը (նվազեցնելով ծառայության միավորի վրա կատարվող ծախսերը), ըստ այդմ՝ բարձրացնել ծառայությունների մատուցման ծավալներ, արդյունավետությունը, որակը և բնակչությանը դրանց հասանելիության մակարդակները
- Էականորեն մեծացնել համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված հնարավորությունները՝ կապված համայնքի սեփականություն համարվող հողային, գույքային և ֆինանսական ռեսուրսների բազային ծավալների մեծացման և դրանց նպատակային օգտագործման հետ
- Համայնքի ընդլայնված տարածքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքի տարածքում առկա բնական պաշարների, պատմամշակութային և այլ արժեքների առկայությունից
- Նպաստել համայնքի տարածքային համաչափ զարգացմանը՝ տեղային «աճի բևեռների» ստեղծման և զարգացման, համայնքի սոցիալ-տնտեսական մրցունակության և գրավչության բարձրացման շնորհիվ
- Մեղմացնել համայնքում ՏԻ վրա բնակիչների ազգակցական կապերի հնարավոր բացասական ազդեցությունները
- Նպաստել համայնքի ավագանու ինստիտուտի կայացմանը, որի շնորհիվ կուժեղանա համայնքի ներքին վերահսկողության համակարգը, կբարձրանա համայնքի ընդհանուր կառավարման արդյունավետությունը
- Բարձրացնել համայնքի ՏԻՄ-երի փոխհարաբերությունների և համագործակցության մակարդակը ՀՀ պետական կառավարման մարմինների հետ՝ նպաստելով համայնքի աստիճանական զարգացմանը
- Հնարավորինս արագ կայանալ և պատրաստ լինել՝ ընդունելու և իրականացնելու ՏԻՄ-երին օրենքով ակնկալվող նոր սեփական և պատվիրակված լիազորություններ՝ համապատասխան ֆինանսական միջոցներով

- Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ հիմնելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը
- Համայնքի վարչական տարածքում զարգացնել օրգանական գյուղատնտեսությունը, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրությունը, զարկ տալ ջերմոցների ստեղծմանը՝ նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը
- Համայնքի բնակավայրերի գազաֆիկացման միջոցով բարելավել բնակչության կենցաղային պայմանները, նպաստել նրանց կենսամակարդակի բարձրացմանը
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, համայնքում պատշաճ մակարդակով կազմակերպելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցների հասանելիության ապահովման միջոցով նպաստել ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության, համայնքային ծառայությունների մատուցման մակարդակի կտրուկ բարձրացմանը, արտաքին աշխարհի հետ նոր կապերի ու համագործակցության հաստատմանը և համայնքային տնտեսությունում լրացուցիչ ներդրումների ապահովմանը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Համայնքի մեջ ընդգրկված փոքր բնակավայրերից բնակիչների հնարավոր արտահոսք դեպի համայնքի կենտրոն կամ այլ խոշոր բնակավայրեր
- Համայնքի կենտրոնի, որպես տարաբնակեցման տեղային կենտրոնի, զարգացմանը չափից դուրս մեծ ուշադրություն դարձնելը՝ ի հաշիվ համայնքի կազմում ընդգրկված այլ բնակավայրերի, կվատացնի համայնքի փոքր բնակավայրերի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական վիճակը՝ վնասելով համայնքի համաչափ զարգացմանը
- ԲԲՀ-ի կառավարման փորձի պակասը և արդյունավետության ապահովման իրատեսականությունը
- Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակը

- Անհրաժեշտ ռեսուրսների անբավարարությունը, ինչպես նաև համայնքի ՏԻՄ-երի հստակ և նպատակային ծրագրերի բացակայությունը (հատկապես ԲԲՀ-ի ՏԻՄ-երի գործունեության սկզբնական շրջանում) կարող են առաջացնել համայնքի բնակիչների՝ ինչ-որ տեղ հիմնավորված թերահավատությունը, հիասթափությունը և անվստահությունը ՏԻՄ-երի նկատմամբ
- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի մաշվածության և բաց ավազանների առկայության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը
- Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհներին քարաթափումների և սողանքների վտանգը
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
- Կոյուղաջրերի հեռացման ցանցերի բացակայությունը իր բացասական ազդեցությունն է թողնում սանիտարական վիճակի և մաքրության վրա
- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրյան աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը:
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները /ցրտաշունչ և երկարատեվ ձմեռներ, կարկտահարություն, ցրտահարություն, ուժեղ քամիներ, հեղեղումներ/
- Բնակավայրերի անբարեկարգ վիճակը, բնակչության, հատկապես երիտասարդների, հանգստի և ազատ ժամանցի պայմանների բացակայությունը թուլացնում է գրավչությունը գյուղական բնակավայրերի նկատմամբ, պատճառ դառնում հատկապես երիտասարդ ընտանիքների արտագաղթի:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՉԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

Ամասիան դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման, մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած համայնք, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն է՝**

